

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ Ե Մ

ՀՀ կրթության և գիտության

նախարար՝

Ա. Աշոտյան

«-----» ----- 2009թ.

ՀՀ պետ. գրանցման թ. -----

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

Մասնագիտությունը՝ **310801 Գյուղատնտեսության մեքենայագույն**
դասիչ, անվանում

Որակավորման աստիճանը՝ **Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր**
անվանում

ԵՐԵՎԱՆ 2009

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. **310801 Գյուղատնտեսության մեքենայացում** մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. օգոստոսի 30 -ի թիվ 1038-Ն որոշմամբ:

Շրջանավարտի որակավորումը՝ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր:

310801 Գյուղատնտեսության մեքենայացում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետը 4տարի 8 ամիս է:

Շրջանավարտի որակավորման բնութագիրը.

310801 Գյուղատնտեսության մեքենայացում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝

1. տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր՝ գյուղացիական կոլեկտիվ և պետական տնտեսություններում
2. տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր՝ գյուղ.տեխնիկայի շահագործման և նորոգման ձեռնարկություններում
3. տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր՝ նախագծային, գիտական և ուսումնական համակարգերի սպասարկման ոլորտներում:

Մասնագիտական գործունեության բնագավառը.

310801 «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտությունը առնչվում է գիտության (տեխնիկայի, տեխնոլոգիաների, կառավարման և այլն) այն բնագավառին, որը ներառում է մարդկային գործունեության եղանակների, միջոցների և մեթոդների այն ամբողջությանը, որն ուղղված է. գյուղ. արտադրության համալիր մեքենայացմանը, գյուղ. տեխնիկայի շահագործման ու նորոգման, տեխնոլոգիական գործընթացների մշակման և կազմակերպման, արտադրատեխնոլոգիական, կազմակերպակառավարչական հետազոտական գործունեության համար, նոր տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ստեղծման, կիրառման և գիտագործնական խնդիրների լուծմանը:

Մասնագիտական գործունեության օբյեկտները.

1. գյուղացիական ֆերմերային, կոլեկտիվ և պետական տնտեսություններ,
2. գյուղ.տեխնիկայի շահագործման և նորոգման ձեռնարկություններ,
3. նախագծային, գիտական և ուսումնական համակարգերի սպասարկման ոլորտներ:

Մասնագիտական գործունեության տեսակները.

310801Գյուղատնտեսության մեքենայացում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված հիմնարար և մասնագիտական պատրաստությանը համապատասխան կարող է կատարել մասնագիտական գործունեության հետևյալ տեսակները՝

1. իրագործել արտադրական գործընթացների համալիր մեքենայացման, էլեկտրիֆիկացման և ավտոմատացման աշխատանքները
2. ապահովել ՉՏՀ կայանների, նորոգման արհեստանոցների և մեքենայացման միջոցների բարձր արտադրողականության և նավթամթերքների արդյունավետ օգտագործում:
3. օգտվել ժամանակակից հաշվողական տեխնիկայից և գիտատեխնիկական ինֆորմացիայի աղբյուրներից:

Մասնագիտական գործունեության ընդհանրական խնդիրները.

310801Գյուղատնտեսության մեքենայացում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը կախված մասնագիտական գործունեության տեսակից, պետք է պատրաստ լինի լուծելու հետևյալ մասնագիտական խնդիրները.

ա) մասնագիտական գործունեության`

1. հաշվարկել և պահպանել գյուղ. ագրեգատների, մեքենաների, սարքավորումների լավագույն աշխատանքի ռեժիմները և տեխնոլոգիական պարամետրերը
2. գնահատել մեքենայացված աշխատանքների որակը և արդյունավետությունը

բ) փորձարարական-հետազոտական գործունեության`

փորձնական եղանակով ընտրել և ստուգել մեքենաների օպտիմալ համակարգը: Կազմել հայտեր մեքենաներ, սարքավորումներ, վառելանյութեր և քսանյութեր ձեռք բերելու համար:

գ) կազմակերպական-կառավարչական գործունեության`

կազմակերպել գյուղ.տեխնիկայի սպասարկումը, նորոգումը և պահպանումը: Գնահատել կատարված աշխատանքի որակը և որոշել ինքնարժեքը: Գնահատել մեքենաների տեխնիկական վիճակը, հայտնաբերել և վերացնել անսարքությունները:

Որակավորման պահանջները

Մասնագիտական խնդիրները լուծելու նպատակով ճարտարագետ-բակալավրը կատարում է հետևյալ գործառնությունները`

1. նա պետք է տիրապետի տեսական, տեխնիկական, մասնագիտական և ագրոնոմիկական առարկաներին, ճյուղի էկոնոմիկայի, գյուղ.արտադրության կազմակերպման և կառավարման հիմունքներին, կեսագործունեության անվտանգության և շրջակա միջավայրի պահպանմանը,
2. մշակել աշխատանքի և արտադրության ժամանակակից մեթոդներ` բիզնեսի, մենեջմենտի և մարքեթինգի հիմնական սկզբունքների կիրառմամբ,
3. տիրապետել գյուղ.մեքենաների, ավտոմոբիլների և տրակտորների ճարտարագիտական նախագծման հիմունքներին,
4. մեքենատրակտորային ագրեգատների ճիշտ կոնպլեկտավորման, շահագործման և նորոգման աշխատանքներին,
5. աշխատել տեխնիկական փաստաթղթերի հետ, և մշակել դրանք,
6. կիրառել ավտոմատացված կառավարման համակարգեր` ագրեգատների շահագործման ընթացքում բարձր տեխնիկատնտեսական ցուցանիշներ ապահովելու համար

- մասնակցել գյուղ.մեքենայացման մասնագիտական խնդիրների առաջադրման, ծրագրերի կազմման և լուծմանն ուղղված աշխատանքների բոլոր փուլերին,
- կազմակերպել նյութերի, միջոցների, սարքավորումների, տեխնոլոգիական

գործընթացների արդյունավետ օգտագործման գործառնություններ,

- մասնակցել գյուղ.մեքենայացման գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և արդյունքների մշակման բոլոր փուլերին,
 - ուսումնասիրել գյուղ.մեքենայացման բնագավառին առնչվող մասնագիտական գրականությունը և գիտատեխնիկական ինֆորմացիան, ծանոթանալ բնագավառի գիտատեխնիկական նորույթներին և նվաճումներին,
 - օգտվել գյուղ.մեքենայացման բնագավառի ինֆորմացիոն տեխնոլոգիաներից, տվյալների բազաներից, փորձագիտական համակարգերից և կիրառական ծրագրերի փաթեթներից,
 - կազմակերպել իր ենթակայության ստորաբաժանման աշխատանքները:
- Ճարտարագետ-բակալավոր պետք է ծանոթ լինի՝
- իր մասնագիտական գործունեության բնագավառին առնչվող իրավական ակտերին, որոշումներին, կարգադրություններին, մեթոդական և նորմատիվային նյութերին,
 - գործող չափորոշիչներին, բնագավառի սարքավորման, ինֆորմատիկայի միջոցների տեխնիկատնտեսական ցուցանիշներին, տեխնոլոգիաներին, դրանց շահագործման կարգացույցներին,
 - գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքով ստացված տվյալների ներկայացման, հաշվետվությունների և տեխնիկական փաստաթղթերի կազմման եղանակներին,
 - աշխատանքային օրենսդրության հիմունքներին, աշխատանքի պաշպանության նորմերին և կանոններին:

Մասնագիտական հարմարման հնարավորությունը.

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավոր կարող է հարմարվել հարակից մասնագիտական գործունեության հետևյալ տեսակներին՝

1. գյուղ.մեքենաների և սարքավորումների նախագծում,
2. ավտոմոբիլային տրանսպորտում երթևեկության կառավարում, բեռների ուղևորների փոխադրումների կազմակերպում,
3. բեռնման- բեռնաթափման մեքենայացված աշխատանքների կազմակերպում և ավտոտրանսպորտի տեխնիկական սպասարկում:

Շրջանավարտի կրթությունը շարունակելու հնարավորությունը

310801 գյուղ.մեքենայացում մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած ճարտարագետ-բակալավոր պատրաստ է կրթությունը շարունակել՝

- կրճատված ժամկետներում ստանալ բակալավորի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
- մագիստրատուրայում ստանալ մագիստրոսի որակավորման աստիճան,
- ասպիրանտուրայում (միայն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո) ստանալ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2. ԴԻՍՈՐԴԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

2.1. Դիմորդի նախորդող կրթական մակարդակը՝

միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն

միջնակարգ (լրիվ), միջին մասնագիտական կրթություն:

Դիմորդը պետք է ունենա՝

պետական նմուշի վկայական միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության կամ միջին մասնագիտական կրթության, կամ նախնական մասնագիտական կրթության մասին, որում կա գրառում դիմորդի միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստանալու մասին, կամ բարձրագույն մասնագիտական կրթության մասին:

**3. 310801 ԳՅՈՒՂ.ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ**

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծագիրը մշակվում է սույն պետական կրթական չափորոշիչով և ներառում է՝ մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բովանդակականության պարտադիր նվազագույնի իրականացման պայմաններին և ուսումնառության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են սույն պետական կրթական չափորոշիչով:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը ձևավորվում է հանրապետական, բուհական, ուսանողի կողմից ընտրովի և ֆակուլտատիվ բաղադրիչների դասընթացներից: Ուսանողի կողմից ընտրովի դասընթացները յուրաքանչյուր կրթաբլոկում բովանդակորեն պետք է լրացնեն հանրապետական բաղադրիչում նշված դասընթացները:

. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը

պետք է նախատեսի հետևյալ կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների ուսումնասիրումը՝

ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական՝	ՀՍՏ
ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական՝	ԸԲ
ընդհանուր մասնագիտական՝	ԸՄԴ
մասնագիտացման՝	ՄԴ
ֆակուլտատիվ՝	Ֆ
ինչպես նաև եզրափակիչ պետական որակավորումը՝	ՊՔ և Դ/Ն պաշտպան.

3.5. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի

բուհական բաղադրիչի բովանդակությունը պետք է ապահովի շրջանավարտի պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված որակավորման բնութագրի համաձայն:

Բուհական բաղադրիչում ընդգրկված դասընթացները երաշխավորական բնույթ են կրում:

**4. 310801ԳՅՈՒՂ.ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՍԲ
ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ**

**ՀՍՏ - ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ԿՐԹԱԲԼՈԿ**

1. Ֆիզիկական կուլտուրա - 136 ժամ

Ֆիզիկական կուլտուրան ուսանողների ընդհանուր կուլտուրական և մասնագիտական պատրաստվածության գործընթացում: Նրա սոցիալ կենսաբանական հիմքերը: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես հասարակական երևույթներ:

Հայաստանի հանրապետության օրենսդրությունը ֆիզիկական կուլտուրայի մասին: Անհատի ֆիզիկական կուլտուրան:

Ուսանողի առողջ կենսակերպի հիմքերը: Աշխատունակության օպտիմալացման նպատակով ֆիզիկական կուլտուրայի միջոցների օգտագործման առանձնահատկությունները:

Ընդհանուր ֆիզիկական և հատուկ պատրաստությունը ֆիզիկական դաստիարակության համակարգում:

Սպորտ. սպորտի կամ ֆիզիկական վարժությունների համակարգի անհատական ընտրություն:

Ուսանողների մասնագիտական կիրառական ֆիզիկական պատրաստություն:

Ինքնուրույն պարապմունքների մեթոդիկայի հիմունքները և սեփական օրգանիզմների վիճակի ինքնավերահսկումը:

2. Հայ ժողովրդի պատմություն - 120 ժամ, 4 կրեդիտ

Պատմական գիտության էությունը, մեթոդները: Հայրենական պատմությունը անցյալում և ներկայում: Հայոց պատմությունը որպես համաշխարհային պատմության անքակտելի մաս:

Առարկայի պարբերացումը, ուսումնասիրության մեթոդները: Հայ և օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Հայ ժողովրդի ծագումը և կազմավորումը:

Հին հայկական պետության կազմավորման ու զարգացման փուլերը: Արարատյան թագավորության կազմավորումը (9-6-րդ. դդ.մ.թ.ա.): Երվանդունիների (հայկազյան) համահայկական պետությունը: Արեւմտեան Պարսկաստանը և Երվանդունիները: Ալեքսանդր Մակեդոնացին և Հելլենիզմը Հայաստանում: Արտաշեսյան արքայատոհմի հաստատումը և Արտաշես 1-ին քաղաքական գործիչը: Տիգրան Մեծ: Արտաշեսյան արքայատոհմի անկումը և Արշակունիների արքայատոհմի հաստատումը: Հին հայկական մշակույթը: Արշակունիների անկումը, Հայաստանի բաժանումները: Քրիստոնեության ընդունումն ու հայոց գրերի գյուտը որպես ազգի գոյապահպանության կռվաններ:

Հայ ժողովրդի պայքարը հանուն անկախության վերականգնման 5-9-րդ դարերում: Հայ ժողովրդի ազատագրական պայքարն 5-6-րդ դարերում ընդդեմ պարսկա-բյուզանդական բռնատիրության և ձուլման քաղաքականության: Արաբական

արշավանքներն Հայաստան և Ժողովրդական ապստամբությունները 8-9-րդ դարերում: Հայկական մշակույթը 5-8-րդ դարերում:

Բագրատունիների թագավորության հիմնումը, ամրապնդումը, վերելքը և անկումը: Սելջուկ-թուրքերի արշավանքները և Ջաքարյանների իշխանությունը:

Կիլիկիայի Հայկական պետությունը (11-14-րդ դդ.) : Ռուբինյան իշխանությունը և թագավորության հռչակումը Կիլիկիայում: Հայ-մոնղոլական դաշինքը, Եգիպտական արշավանքները և թագավորության անկումը:

Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դդ.:

Հայաստանը 19-րդ դարի առաջին կեսին: 1804-1813թ.թ. և 1826-1828 թ.թ. ռուս-պարսկական պատերազմները և Արևելյան Հայաստանի նվաճումը Ռուսաստանի կողմից:

Հայ Ժողովրդի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրությունը 19-րդ դարի երկրորդ կեսին:

Հայ Ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին:

Հայաստանի առաջին հանրապետությունը 1918-1920 թ.թ.:

Հայաստանի խորհրդային հանրապետությունը 1920-1940թ.թ.:

Հայ Ժողովուրդը երկրորդ աշխարհամարտի տարիներին:

Հայաստանի խորհրդային հանրապետությունը 1945-1991թ.թ.:

Հայաստանի Հանրապետությունը 1991-2008թ.թ.:

3. Հայոց լեզու և գրականություն - 120 ժամ, 4 կրեդիտ

Լեզվի հիմնական գործառնությունները. լեզուն որպես մարդկային մտածողության արտահայտման ու մտքերի ձևավորման միջոց, որպես հաղորդակցության միջոց, որպես մշակութային արժեքների ստեղծման, պահպանման ու կուտակման միջոց, որպես հասարակական-քաղաքական միտումների կրող:

Աշխարհի լեզուները և լեզվաընտանիքները, հայոց լեզվի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում:

Հայոց լեզվի զարգացման պատմական շրջանները (գրաբար, միջին հայերեն, ժամանակակից հայոց լեզու՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ): Հայոց գիրը և գրչությունը: Մեսրոպյան այբուբենի ստեղծման համազգային պատմական նշանակությունը:

Ուղղագրության, կետադրության և ուղղախոսության ժամանակակից համակարգերը որպես գրավոր և բանավոր խոսքի կարևորագույն չափանիշներ:

Խոսքի կուլտուրայի հիմքերն ու բաղկացուցիչները. ոճաբանություն և ճարտասանական արվեստի հիմունքները:

Ժամանակակից հայերենում ոճի հիմնական տեսակների բնութագրումը. գործա-ռական, իրադրական և անհատական ոճեր:

Գործառական ոճեր:

Առօրյա խոսակցական ոճի ընդհանուր բնութագիրը: Գրական լեզվի ներկայիճակի և նրա հետագա զարգացման ընթացքի առումով առօրյա խոսակցական ոճի ազդեցության դրական և բացասական միտումները: Ժամանակակից հայոց գրական լեզվի անադարտության պահպանման հիմնական խնդիրները: Գիտական ոճի ընդհանուր բնութագիրը: Գիտական և կրթական-ուսումնական ոլորտների գործունեության լեզվական-խոսքային չափանիշները:

Վարչագործարարական ոճի ընդհանուր բնութագիրը: Վարչատնտեսական, օրենսդիր, օրինաստեղծ և պետական կառավարման, ինչպես նաև քաղաքական,

միջազգային, դիվանագիտական ոլորտներում կիրառվող լեզվական-խոսքային չափանիշների առանձնահատկությունները: Այդ ոլորտներին վերաբերող փաստաթղթերի կազմման և դրանց համակարգման հիմնական սկզբունքները: Գովազդային տեքստերի ձևավորման և դրանց մատուցման հիմնական եղանակները:

Հրապարակախոսական ոճի ընդհանուր բնութագիրը: Հուզական-հոգեբանական ներգործության և փաստարկվածության ու տրամաբանականության մոտեցումների համադրումը որպես այդ ոճի գործառույթյան հիմնական սկզբունք:

Գեղարվեստական ոճի ընդհանուր բնութագիրը: Այդ ոճի հիմնական չափանիշների (գրական լեզվի մաքրությունն ու կատարելությունը, գեղագիտականությունը ևն.) պարզաբանումը հայ և համաշխարհային գրական մեծագույն արժեքների օրինակով:

Ճարտասանական արվեստի պատմության և հիմնական սկզբունքների համառոտ ակնարկ:

Ճարտասանական արվեստի կազմախոսական-բնախոսական հիմքերը. ձայնի դրվածքը, շնչառության տեխնիկան, հնչյունի ձևավորման և արտաբերման տեխնիկան ու կուլտուրան: Խոսքի կազմակերպման հոգեբանական, հուզական և տրամաբանական մեխանիզմները:

4. Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ – 120 ժամ, 4 կրեդիտ

Գյուղատնտեսության համար մասնագետներ պատրաստելու խնդիրները որոշարկուն են «Ռուսաց լեզու» դասընթացի հաղորդակցման և պրակտիկ բնույթը. անհատական խոսքի և երկխոսության, ընթերցելու և գրելու, ընկալման և խոսակցական ունակությունների ձևավորումը և զարգացումը:

Գործառական-հմաստաբանական հիմքի վրա խմբավորված քերականական գիտելիքների ուսուցումը դիդակտիկ սկզբունքների և ուսումնական նյութի բաշխվածության հաշվառմամբ:

Նվազագույնի հասցված բառային-քերականական նյութի մատուցումը որպես խոսքի կուլտուրայի կատարելագործման, խոսակցական սխալների կանխատեսման և դրանց վերացման լեզվական հիմք:

Ուսուցանվող լեզվի երկրի մշակույթը և ավանդույթները:

Խոսքի բարեկանոնության (կանոնավարության) տարբեր միջոցների կիրառումը որոշակի իրավիճակներում:

Խոսելու ունակությունը. անհատական խոսքի և երկխոսության կազմակերպումը օգտագործվող պարզ բառային-քերականական միջոցների կիրառմամբ:

Հրապարակային խոսքի հիմունքները (բանավոր հաղորդում, զեկույց ևն.):

Խոսքի ընկալումը. անհատական խոսքի և երկխոսության ըմբռնումը կենցաղային և մասնագիտական հաղորդակցման ոլորտներում:

Ընթերցանություն. տեքստերի տեսակները, ոչ բարդ տեքստեր և մասնագիտական ուղղվածության տեքստեր:

Գրավոր խոսքի ունակություն. համառոտագրում, ռեֆերատ, հաղորդում, դրույթներ:

Վարչագործարարական ոճ. դիմում, ստացական, արձանագրություն, տեղեկանք ևն.:

5. Օտար լեզու – 240 ժամ, 8 կրեդիտ

5.1. Օտար լեզու

Հնչյունների արտասանության, ինտոնացիայի, շեշտադրական համակարգի և ուսուցանվող լեզվում խոսքի ռիթմի յուրահատկությունը, տառադարձության ըն-

թերցանությունը:

Ընդհանուր և տերմինաբանական բնույթի 2000 ուսուցողական բառային միավորով բառապաշարի նվազագույն:

Ըստ կիրառման բնագավառի (կենցաղային, տերմինաբանական, ընդհանուր գիտական, պաշտոնական և այլն) հասկացություն բառապաշարների տարբերակման մասին:

Հասկացություն բառակազմական հիմնական միջոցների մասին:

Հասկացություն ազատ և կայուն բառակապակցությունների, դարձվածաբանական միավորների մասին:

Գրավոր և բանավոր հաղորդակցության ժամանակ առանց իմաստի աղճատման ընդհանուր բնույթի հաղորդակցումն ապահովող քերականական երևույթներ:

Ուսումնասիրվող լեզվի երկրների մշակույթն ու սովորույթները:

Բանավոր խոսքը: Պաշտոնական և ոչ պաշտոնական շփման ընդհանուր հաղորդակցական իրադրություններում առավել չափով օգտագործվող և հարաբերականորեն պարզ բառային-քերականական միջոցների օգտագործումը երկխոսության մեջ և անհատական խոսքում: Հրապարակային խոսքի հիմունքները (բանավոր հաղորդում, զեկույց):

Ունկնդրում: Կենցաղային և մասնագիտական հաղորդակցման բնագավառներում երկխոսության և անհատական խոսքի ըմբռնումը:

Ընթերցանություն: Տեքստերի տեսակները. ոչ բարդ գործնական բնույթի և լայն մասնագիտական ուղղվածության տեքստեր:

Գրավոր խոսքը: Խոսքային ստեղծագործությունների տեսակները. կենսագրություն, փոքր զեկույցներ, անձնական նամակ, գործնական նամակ, ռեֆերատ:

5.2. Ֆրանսերեն լեզու

Դասընթացի ուսուցումը, որը պայմանականորեն բաժանվում է փուլերի, հետապնդում է հետևյալ պահանջները.

- ուսանողը պետք է ուսումնասիրի և յուրացնի ֆրանսերեն հնչյունների արտաբերման առանձնահատկությունները, շեշտադրությունն ու ռիթմիկ խմբերը, խոսքի մեջ ֆրանսերենին բնորոշ հնչյունների կապակցման ձևերը, ֆրանսերեն նախադասության ինտոնացիան՝ կախված նախադասության բնույթից, ուղղագրական նշանները,

- նվազագույն բառապաշարը՝ մոտ 4000 բառային միավոր, պետք է լինի ինչպես ընդհանուր բնույթի, այնպես էլ մասնագիտական բնույթի,

- խոսքային գիտելիքների ուսուցանումը պետք է ունենա տարբերակված բնույթ՝ ըստ գործածության ոլորտի (կենցաղային, տերմինաբանական, ընդհանուր գիտական, պաշտոնական և այլն),

- գաղափար կայուն բառակապակցությունների, դարձվածաբանական միավորների մասին,

- գաղափար բառակազմական հիմնական ձևերի մասին,

- քերականական այնպիսի գիտելիքների և հնտությունների ձեռքբերում, որոնք հնարավոր են դարձնում ուսանողի գրավոր կամ բանավոր հաղորդակցությունը ընդհանուր թեմաների շուրջ, ինչպես նաև այնպիսի գիտելիքների ուսուցում, որոնք անհրաժեշտ են մասնագիտական խոսքի զարգացման համար,

- Ֆրանսիայի մշակույթի, քաղաքակրթության, ազգային ավանդույթների մասին տեղեկատվություն,

- հնարավորինս շատ և վարժ խոսելու հմտություն. առավել գործնական և հարաբերականորեն պարզ բառային-քերականական միջոցների օգնությամբ երկխոսության ծավալում կամ շարադրանք հիմնական հաղորդակցային իրավիճակներում՝ պաշտոնական և ոչ պաշտոնական շփումների ժամանակ,
- ծանոթացում մամուլի լեզվին (բանավոր տեղեկատվություն, զեկուցումներ),
- ընթերցանություն. ոչ բարդ տեքստերի ընթերցում ինչպես լայն պրոֆիլի, այնպես էլ մասնագիտական բնույթի,
- գրավոր խոսք. զեկուցումներ, շարադրություններ:

5.3. Գերմաներեն լեզու

Ծրագիրը ենթադրում է գերմաներեն լեզվի իմացության գործնական կիրառում, լեզվին բնորոշ ճիշտ շեշտադրություն և արտասանություն: Քերականական անհրաժեշտ գիտելիքների ձեռք բերումը, նրանց կիրառումը բանավոր խոսքում և թարգմանչական աշխատանքում: Ուսուցողական ընդհանուր բառապաշարի և տերմինաբանական բնույթի 2000 բառային նվազագույն միավոր:

Բառապաշարի տարբերակում ըստ կիրառման բնագավառի (կենցաղային, տերմինաբանական, գիտական, պաշտոնական):

Ընդհանուր հասկացություն բառակազմությանը վերաբերող միջոցների մասին:

Ընդհանուր հասկացություն ազատ և կայուն բառակապակցությունների ու դարձվածաբանության վերաբերյալ:

Քերականական հմտությունների իմացությունը գրավոր և բանավոր հաղորդակցության ժամանակ առանց աղճատման ընդհանուր բնույթի հաղորդակցումն ապահովելու համար:

Ուսուցանվող լեզվի երկրների մշակույթի և սովորույթների յուրացում:

Ընկալումը բանավոր խոսքի ընթացքում:

Առաջադրված հարցերին համապատասխանորեն արձագանքելու կարողություն:

Անհատական խոսքով և երկխոսությամբ ներկայացվող տեքստեր:

Հրապարակային խոսքի հիմունքները (բանավոր հաղորդում, զեկույց և այլն):

Տեքստերի ճիշտ ընտրություն՝ ոչ բարդ գործնական բնույթի և լայն մասնագիտական բնույթի:

Գրավոր խոսքի զարգացում, որն ուղեկցվում է տարբեր խոսքային ստեղծագործությունների հիմքի վրա՝ զեկույցներ, ռեֆերատներ:

6. Մշակութաբանություն – 60 ժամ, 2 կրեդիտ

Մշակութաբանություն և մշակույթի պատմություն: Մշակութաբանական տեսություններ: Մշակույթի կառուցվածք և գործառույթներ: Հոգևոր մշակույթը և նրա տարրերը: Մշակութային ժառանգորդում, նորարարություն, ավանդապահություն: Ջանգվածային և էլիտար մշակույթ: Արևելք - Արևմուտք մշակութային առնչություններ: Մշակույթ և քաղաքակրթություն:

Նախնադարի մշակույթ և դիցաբանական աշխարհայացք: Արվեստի տեսակների առաջացումը:

Հին աշխարհի մշակույթը. Միջագետք, Հնդկաստան, Չինաստան, Եգիպտոս, Հայաստան: Կրոնա-դիցաբանական, կրոնա-փիլիսոփայական համակարգեր և ար-

վեստ:

Անտիկ աշխարհի մշակույթը. Հունաստան, Հռոմ: Կրոնա-դիցաբանական հավատալիքներ և արվեստ:

Միջնադարյան մշակույթ և գեղարվեստական ոճեր: Վերածննդի մշակույթ:

Հունանիզմ և արվեստ: Մշակույթը 17-20-րդ դարերում: Դարաշրջաններ և գեղարվեստական ուղղություններ:

7. Քաղաքագիտություն – 90 ժամ, 3 կրեդիտ

Քաղաքագիտության օբյեկտը և առարկան, մեթոդները և գործառույթները: Քաղաքագիտության և այլ հասարակագիտական առարկաների փոխհարաբերությունները: Քաղաքական ուսմունքների զարգացման հիմնական փուլերը (Անտիկ աշխարհ, միջնադար, նոր և նորագույն շրջան): Հայ քաղաքական մտքի ավանդույթները, արմատները սոցիոմշակութային հիմքերը: Արդի քաղաքագիտական դպրոցները:

Քաղաքականություն և քաղաքական իշխանություն: Քաղաքական իշխանության իրականացման մեխանիզմները, արդյունավետությունը և լեգիտիմությունը: Քաղաքական համակարգ: Քաղաքական ռեժիմ (վարչակարգ):

Դեմոկրատիայի ժամանակակից տեսություններն ու մոդելները: Պետություն, գործառույթները, ձևերը: Պետական իշխանության մարմինները Հայաստանում: Իրավական և սոցիալական պետություն: Խորհրդարան և խորհրդարանականություն: Կառավարման նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական ձևերի համեմատական վերլուծությունը:

Քաղաքական իշխանության սոցիալական սուբյեկտները:

Շահերի խմբեր, քաղաքական լիդերություն և քաղաքական լիդերներ, էլիտա: Ընտրություններ և ընտրական համակարգեր: ՀՀ ընտրական համակարգը: Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Բազմակուսակցական համակարգի կայացումը Հայաստանում:

Քաղաքական գործընթացներ: Քաղաքական արդիականացում: Քաղաքական արդիականացման առանձնահատկությունները ՀՀ-ում: Քաղաքական կոնֆլիկտներ և դրանց լուծման ուղիները: Քաղաքական տեխնոլոգիաներ:

Համաշխարհային քաղաքական գործընթացներ և միջազգային հարաբերություններ: Արդի համաշխարհային հարաբերությունների աշխարհաքաղաքական վերլուծություն: Հայաստանի ազգային շահերը նոր աշխարհաքաղաքական իրավիճակում:

Քաղաքական գլոբալիստիկա, ընդհանուր բնութագիրը, համամարդկային հիմնահարցերի լուծման քաղաքական ուղիները: Քաղաքական կանխատեսում:

8. Իրավագիտություն – 120 ժամ, 4 կրեդիտ

Պետությունն ու իրավունքը: Դրանց դերը հասարակության կյանքում: Պետության և իրավունքի ծագումը, էությունը, հատկանիշները, գործառույթները, կառուցակարգը, ձևերը:

Իրավունքի նորմերը և աղբյուրները: Նորմատիվային իրավական ակտերի հասկացությունը, տեսակները: Օրինակության հասկացությունը:

Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգը: Իրավունքի ճյուղերը:

Սահմանադրական իրավունք: Պետության և անհատի փոխհարաբերության հիմքերը: Քաղաքացիների իրավական վիճակի սկզբունքները: Պետական մարմին-

ների համակարգը և տեսակները:

Քաղաքացիական իրավունք: Քաղաքացիական իրավահարաբերություն: Իրավաբանական անձինք, դրանց տեսակները և կազմավորման առանձնահատկությունները: Անձնական ոչ գույքային բարիքները: Սեփականության իրավունք: Գրավի իրավունք: Գործարքներ և ներկայացուցչություն: Հայցային վաղեմություն: Պարտավորություններ: Պայմանագիր:

Հեղինակային իրավունք: Բույսերի նոր սորտերի և կենդանիների նոր ցեղերի նկատմամբ իրավունքների պահպանություն: Ժառանգական իրավունք:

Աշխատանքային իրավունք: Աշխատանքային պայմանագրեր: Աշխատանքային վեճեր:

Վարչական իրավունք: Պետական կառավարման մարմինների համակարգը և տեսակները:

Քրեական իրավունք: Հանցագործության հասկացությունը և դրա տեսակները: Քրեական պատասխանատվության հիմքը: Քրեական պատիժը և պատժի տեսակները:

Հողային իրավունք: ՀՀ Հողային օրենսդրությունը: Հողային վեճերի լուծումը: Իրավակարգի պահպանության և հանցավորության դեմ պայքարող մարմինների համակարգը: ՀՀ ոստիկանության մարմինները: Արդարադատությունը և դրա խնդիրները:

Քաղաքացիական դատավարության իրավունքը: Քրեական դատավարության իրավունքը: Ապացույցներ, իրեղեն ապացույցներ: Դատավարման հարկադրանքի միջոցները: Ձեռքակալում: Խափանման միջոցներ: Բերման ենթարկելը:

Միջազգային իրավունք: Միջազգային իրավունքի սկզբունքները և սուբյեկտները:

Միջազգային պայմանագրեր: Միջազգային իրավունքի աղբյուրները:

9. Փիլիսոփայություն - 120 ժամ, 4 կրեդիտ

Փիլիսոփայություն առարկան: Փիլիսոփայության ձևավորումը, հետազոտության ոլորտները, աշխարհայացքային հիմնախնդիրները: Փիլիսոփայական գիտելիքների կառուցվածքը: Փիլիսոփայության տեղը և դերը գիտության ու մշակույթի ոլորտում:

Փիլիսոփայության զարգացման հիմնական փուլերը: Անտիկ Հունաստանի, միջին դարերի, հայոց քրիստոնեական ջատագովական, նոր և նորագույն ժամանակաշրջանի փիլիսոփայական միտքը:

Ուսմունք կեցության մասին: Տարածությունը, ժամանակը, շարժումը կեցության դրսևորման եղանակ: Շարժման, ժամանակի, տարածության վերաբերյալ դասական և հարաբերականության տեսությունները: Շարժում և զարգացում: Դետերմինիզմ և ինդետերմինիզմ: Օրենք և օրինաչափություն:

Գիտակցություն: Նյութականը և իդեալականը: Գիտակցականը և անգիտակցականը: Լեզու և մտածողություն:

Ճանաչողություն: Առօրեական, գիտական, կրոնական, փիլիսոփայական ճանաչողություն: Գիտելիք և հավատ: Ըմբռնում և բացատրություն: Իմացության զգայական և ռացիոնալ աստիճանները: Ստեղծագործության, բանավեճի, փաստարկման, ինտուիցիայի դերը կենսաբանական հետազոտություններում:

Ճշմարտության հիմնախնդիրը: Ճշմարտության կոնկրետությունը, բացարձակությունը, օբյեկտիվությունը, հարաբերականությունը: Ճշմարտության չափանիշ-

ները:

Գիտական ճանաչողության կառուցվածքը: Գիտական իմացության էմպիրիկ և տեսական մակարդակները: Գիտական հետազոտության մեթոդները: Գիտության դերի արժեքավորումները փիլիսոփայության մեջ: Գիտատեխնիկական հեղափոխություն:

Մարդու կեցության իմաստը: Մարդը սոցիալական միջավայրի արդյունք, կենսաբանական, հոգեկան նախահիմքերի ամբողջություն: Ազատություն և պատասխանատվություն: Բարոյականություն, արդարություն, իրավունք: Բարոյական արժեք: Գեղագիտական և կրոնական արժեքներ: Խղճի ազատություն:

Բնություն և հասարակություն: Հասարակության դասային շերտավորման հիմքերը: Քաղաքացիական հասարակություն և պետություն: Ազատություն և անհրաժեշտություն: Հասարակության զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Սոցիալական հեղափոխություն:

Փիլիսոփայության հիմնական ուղղությունները և դպրոցները: 20-րդ դարի փիլիսոփայական հիմնական հոսանքները:

Կենսաբանության և էկոլոգիայի փիլիսոփայական հիմնախնդիրները: Էկոլոգիան և քաղաքականությունը: Էկոլոգիական աղետ: Բնապահպանական շարժումներ:

10. Տնտեսագիտության տեսություն – 120 ժամ, 4 կրեդիտ

Տնտեսագիտության տեսության հիմունքները: Տնտեսագիտության տեսության առարկան և գործառույթները: Բարիք: Պահանջմունքներ, ռեսուրսներ: Տեսական ընտրություն: Տեսական հարաբերություններ: Տնտեսական հարաբերություններ: Տնտեսական համակարգեր: Տնտեսագիտության տեսության զարգացման հիմնական փուլերը: Տնտեսագիտության տեսության մեթոդները:

Միկրոտնտեսագիտություն: Շուկա, առաջարկ և պահանջարկ: Սպառողական նախընտրություն և սահմանային օգտակարություն:

Պահանջարկի գործոնները: Անհատական և շուկայական պահանջարկ:

Եկամտի էֆեկտ և փոխարինման էֆեկտ: Առաձգականություն: Առաջարկը և նրա գործոնները: Սահմանային արտադրողականության անկման օրենքը:

Մասշտաբի էֆեկտը: Ծախսերի տեսակները:

Ձեռնարկություն: Հասույթը և շահույթը: Ձեռնարկատիրություն: Շահույթի մաքսիմալացման սկզբունքը, կատարյալ մրցակցային ֆիրմայի և ճյուղի առաջարկը: Մրցակցային շուկաների արդյունավետությունը: Մենաշնորհ: Մենաշնորհատիրական մրցակցություն: Օլիգոպոլիս: Հակամենաշնորհային կարգավորում: Արտադրության գործոնների նկատմամբ պահանջարկը:

Աշխատաքի շուկա: Աշխատանքի առաջարկն ու պահանջարկը: Աշխատավարձ և զբաղվածություն: Կապիտալի շուկա: Տոկոսադրույք և ինվեստիցիա: Հողի շուկա: Ռենտա: Ընդհանուր հավասարակշռություն և բարեկեցություն: Եկամուտների բաշխումը: Անհավասարություն: Արտաքին էֆեկտներ և հասարակական բարիքներ: Պետության դերը:

Մակրոտնտեսագիտություն: Ազգային տնտեսությունը որպես ամբողջություն: ՀՆԱ-ն և նրա չափման եղանակները: Ազգային եկամուտ: Տնօրինվող անձնական եկամուտ: Գների ինդեքսները: Գործազրկությունը և նրա ձևերը: Ինֆլյացիան և նրա տեսակները: Տնտեսական պարբերաշրջանները: Մակրոտնտեսական հավասարակշռություն: Ամբողջական առաջարկ և ամբողջական պահանջարկ: Կայունացման քաղաքականություն:

Հավասարակշռությունը ապրանքային շուկայում:

Սպառում և խնայողություն: Ինվեստիցիա: Պետական ծախսեր և հարկեր: Մուլտիպլիկատորի էֆեկտը: Հարկաբյուջետային քաղաքականություն:

Փողը և նրա ֆունկցիաները: Հավասարակշռությունը փողի շուկայում: Փողային

մուլտիպլիկատորը: Բանկային համակարգ: Դրամավարկային քաղաքականություն: Տնտեսական աճ և զարգացում: Միջազգային տնտեսական հարաբերություններ: Արտաքին առևտուր և արտաքին քաղաքականություն: Վճարային հաշվեկշիռ: Տարադրամի կուրսեր:

Անցման շրջանի առանձնահատկությունները Հայաստանում: Սոցիալական ուղրտի վերափոխումները: Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը: Բաց էկոնոմիկայի ձևավորումը:

Հանրապետական բաղադրիչ

1. Գյուղատնտեսության էկոնոմիկա - 120 ժամ, 4 կրեդիտ

Ագրարային ոլորտում տնտեսական օրենքների գործելու մեխանիզմը, առարկայի խնդիրները և ուսումնասիրման մեթոդները, դերը ճարտարագետ մասնագետներ պատրաստելու գործում:

Գյուղատնտեսության ռեսուրսօգտագործման էկոնոմիկան: Հողային ֆոնդը և նրա օգտագործման տնտեսական արդյունավետությունը:

Գյուղատնտեսության արտադրական կապիտալը (հիմնական և շրջանառու ֆոնդերը): Նրանց կազմի, կառուցվածքի, վիճակի, ապահովման տնտեսագիտական գնահատումը, հաշվառումը, օգտագործման արդյունավետությունը:

Կապիտալ ներդրումները և նրանց ներդրման, ռիսկի արդարացվածության տնտեսագիտական հիմնավորումը, ցուցանիշները:

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան: Տեխնիկական պարկը, էներգետիկական, նորացման բազան, ջրային պաշարները, անասնազխաքանակը, բազմամյա տնկարքները և այլն: Դրանց պահանջի և տնտեսական արդյունավետության որոշման մեթոդիկան, ցուցանիշները:

Գյուղատնտեսության ինտենսիվացումը: Գյուղատնտեսության աշխատանքային ռեսուրսները և նրանց օգտագործման տնտեսական արդյունավետությունը:

Գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետությունը և զուտ եկամուտ, շահույթ, շահութաբերություն, աշխատանքի արտադրողականություն, ինքնարժեք:

Արտադրական ուժերի տեղաբաշխում և մասնագիտացում:

Բուսաբուծական ճյուղերի էկոնոմիկան: Անասնաբուծական ճյուղի էկոնոմիկա:

Մարքեթինգը և քոնսալթինգը ճարտարագետ մասնագետների պատրաստման գործում:

2. Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում -60 ժամ, 2 կրեդիտ

Անցումը շուկայական էկոնոմիկային պահանջում է գյուղացիական տնտեսություններից, ձեռնարկություններից և տնտեսավարող այլ սուբյեկտներից, գյուղատնտեսական արտադրությունը սպասարկող ենթակառուցվածքներից գիտատեխնիկական առաջընթացի, գյուղատնտեսական արտադրության կազմակերպման արդյունավետ ձևերի կիրառման, տնտեսավարության հաղթահարման, ձեռնարկատի-

րական նախաձեռնությունների ակտիվացման, այլ արտադրատնտեսական գործունեություն ծավալելու հիման վրա հասնել գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացմանը և առաջխաղացմանը:

Առարկայի դասավանդումը իրականացվում է նախապես հաստատված ծրագրի համաձայն, որը բացի ավանդական թեմաներից ընդգրկում է նաև որոշակի թեմաներ նպատակամիտված գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման կազմակերպման հարցերին, մասնավորապես՝ գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման կազմակերպման առանձնահատկությունները նոր տնտեսական պայմաններում լեռնային հողագործության մեջ, գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական սպասարկում-ների, նորոգումների և պահպանման կազմակարգումը, նավթային տնտեսության և էլեկտրատնտեսության կազմակերպումը, գյուղատնտեսության նյութատեխնիկական ապահովման կազմակերպումը, գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրական սպասարկման կազմակերպումը և այլ հարցեր:

3. ԱՊՅ կազմակերպությունների կառավարում, 60 ժամ, 2 կրեդիտ

Արտադրության կառավարման (մենեջմենթի) դերը շուկայական տնտեսության արմատավորման պայմաններում: Հաջողության հասնելու կարևոր գոծոնը՝ բարձր պրոֆեսիոնալությամբ տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական հարցերով իրազեկ, պատասխանատվության զգացումով օժտված, նոր տիպի դեկավարների պատրաստում: Կառավարման էությունը, հասկացությունը, օրինաչափությունները, սկզբունքները, կազմակերպության ներքին ու արտաքին միջավայրը, կառավարման համակարգի հասկացությունը և այլն:

Կառավարման նպատակները, դրանց ընտրությունը, հստակ առաքելության սահմանումը: Նպատակների նվաճման գործում իրականացվող ֆունկցիաները (գործառույթները) ռազմավարական պլանավորում, նրա տիպերը և իրացումը, շարժառիթի դերը պահանջումների և վարձահատույցի կազմակերպման գործում: Կառավարչական որոշումների ընդունման, վերահսկողության և հաղորդակցման կազմակերպման հարցերը: Կատարողների վրա ներգործության մեթոդները՝ տնտեսական, կազմակերպակարգադրական և սոցիալ-հոգեբանական: Կառավարման կադրերը նրանց ընտրության, գնահատման, տեղաբաշխման, դաստիարակման, ռեզերվի պատրաստման, աշխատանքի կազմակերպման ու նորմավորման հարցերը:

Կազմակերպության գործունեության արդյունավետության ապահովում, հակամարտությունների, ռիսկի, գիտատեխնիկական առաջադիմության, աշխատանքի և արտադրանքի որակի, մատակարարման և իրացման կառավարման հարցեր և այլն:

4. Մաթեմատիկական վիճակագրության հիմունքներ և հետազոտման

մեթոդիկա - 60ժամ, 2 կրեդիտ

Դասընթացի հիմնական թեմաներն են՝ Հավանականությունների դասական, երկրաչափական, վիճակագրական սահմանումները: Գումարման, բազմապատկման թեորեմները: Լրիվ հավանականությունների, հիպոթեզների հավանականությունների, Բեռնուլիի, Լապլասի լոկալ և ինտեգրալ բանաձևերը: Հարաբերական հաճախության նրա հավանականությունից շեղման հավանականությունը: Դիսկրետ պատահական մեծության բինոմական, Պուասոնի, երկրաչափական բաշխ-

ման օրենքները: Մաթեմատիկական սպասումի, դիսպերսիայի և հատկությունները ինչպես դիսկրետ այնպես էլ անընդհատ պատահական մեծությունների համար: Չեբիշևի և Բեռնուլիի բանաձևերը: Բաշխման և խտության ֆունկցիաները և նրանց հատկությունները: Նորմալ, ցուցչային և հավասարաչափ բաշխման ֆունկցիաները: Երկչափ պատահական մեծության թվային բնութագրիչները: Մաթեմատիկական վիճակագրության թվային բնութագրիչները, վստահելի հավանականություն և վստահելի միջակայքերի որոշման եղանակները և չափումների գնահատման ճշտությունը:

Գծային ռեգրեսիա երկու և երեք չափանի պատահական մեծությունների համար: Վիճակագրական հիպոթեզներ և նրանց ստուգման եղանակները: Միագործոն դիսպերսիոն վերլուծություն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈՎ

4 Հանրապետական բաղադրիչ

1. Բարձրագույն մաթեմատիկա - 360 ժամ, 12 կրեդիտ

Անալիտիկ երկրաչափություն: Ուղիղ գիծը հարթության վրա: Երկրորդ կարգի կորեր: Կոորդինատների ձևափոխությունը: Հարթությունը և ուղիղ գիծը տարածության մեջ: Երկրորդ կարգի մակերևույթներ: Գծային հանրահաշիվ: Որոշիչներ: Հակադարձ մատրից: Գծային հավասարումների համասեռ և ոչ համասեռ համակարգեր: Կրամերի կանոնը: Գաուսի մեթոդը: Վեկտորական հանրահաշիվ: Մաթեմատիկական անալիզ: Թվային հաջորդականություններ: Ջուզամետ հաջորդականություններ և նրանց հատկությունները: Մեկ փոփոխականի ֆունկցիա: Ֆունկցիայի անընդհատությունը: Անընդհատ ֆունկցիայի հատկությունները: Ֆունկցիայի ածանցյալը: Ֆունկցիայի հետազոտումը դիֆերենցիալ հաշվի մեթոդներով և գրաֆիկի կառուցումը: Մի քանի փոփոխականի ֆունկցիաներ: Նվազագույն քառակուսիների մեթոդը: Կոմպլեքս թվեր: Անորոշ և որոշյալ ինտեգրալներ: Որոշյալ ինտեգրալի կիրառությունները: Անհսկական ինտեգրալներ: Բազմապատիկ և կորագիծ ինտեգրալներ: Նրանց կիրառությունները: Թվային շարքեր: Դրական անդամներով շարքերի զուգամիտության հայտանիշները: Կամայական անդամներով շարքերի զուգամիտությունը: Ֆունկցիոնալ շարքեր: Աստիճանային շարք: Թեյլորի և Մակլորենի շարքեր: Ֆուրյեի շարք: Սովորական դիֆերենցիալ հավասարումներ: Առաջին կարգի համասեռ գծային և դրանց բերվող հավասարումներ: Երկրորդ կարգի գծային համասեռ և ոչ համասեռ հավասարումներ: Բարձր կարգի հավասարումներ: Դիֆերենցիալ հավասարումների համակարգեր: Հավանականությունների տեսություն:

2. Ֆիզիկա – 270 ժամ, 9 կրեդիտ

Ներածություն: Դասական մեխանիկայի ֆիզիկական հիմունքները: Կինեմատիկա, օպտիկա, դինամիկա: Մեխանիկական աշխատանք, հզորություն, էներգիա: Պինդ մարմնի մեխանիկա:

Հեղուկների և գազերի շարժումը: Տատանումներ և ալիքներ:

Հարաբերականության հատուկ տեսություն:

Մոլեկուլյար ֆիզիկա և թերմոդինամիկա: Մոլեկուլյար ֆիզիկա: Ջերմադի-

նամիկա: Իրական գազեր: Բյուրեղային և ամորֆ մարմիններ: Փուլային հավասարակշռություններ և անցումներ:

Էլեկտրականություն: Էլեկտրաստատիկա: Էլեկտրական դաշտը դիէլեկտրիկներում: Հաստատուն էլեկտրական հոսանք: Էլեկտրական հոսանքը մետաղներում և կիսահաղորդիչներում: Էլեկտրական հոսանքը հեղուկներում և գազերում: Էլեկտրամագնիսականություն: Էլեկտրամագնիսական ինդուկցիա, ինդուկտիվություն փոփոխական հոսանք:

Օպտիկա: Ճառագայթային օպտիկա: Ալիքային օպտիկա: Քվանտային օպտիկա:

Ջերմային ճառագայթման օրենքները, ֆոտոէֆեկտ, լույսի ճնշումը, Կոմպտոնի էֆեկտը:

Ատոմային և միջուկային ֆիզիկա: Ատոմի կառուցվածքը: Ատոմի միջուկը: Տարրական մասնիկներ: Միջուկային ռեակցիա, տրոհում: Շխթայական ռեակցիաներ:

3. Քիմիա - 90 ժամ, 3 կրեդիտ

Նյութի կառույցը: Ատոմի, մոլեկուլի կառուցվածքը, քիմիական կապ:

Քիմիական համակարգեր՝ լուծույթներ, դիսպերս համակարգեր, էլեկտրաքիմիա-կան համակարգեր;

Քիմիական թերմոդինամիկա և կինետիկա՝ քիմիական պրոցեսների էներգետիկան, քիմիական և ֆազային հավասարակշռություններ: Քիմիական ռեակցիայի արագությունը, կատալիտիկ ռեակցիաներ:

Պարբերական համակարգը և բիոգեն էլեմենտների քիմիան, նրանց հատկությունը, ստացումը, կիրառումը:

Անալիտիկ քիմիայի հիմունքները:

Որակական և քանակական անալիզ: Անալիզի ֆիզիկա-քիմիական մեթոդները:

Օրգանական միացությունների քիմիան՝ ածխաջրածիններ, ֆունկցիոնալ խմբերով միացություններ, ճարպեր, ածխաջրեր, սպիտակուցներ, պոլիմերներ:

Քիմիական պրակտիկում:

4. Տեսական մեխանիկա - 240 ժամ, 8 կրեդիտ

Տեսական մեխանիկան և նրա տեղն ու դերը բնական և տեխնիկական գիտությունների շարքում: Ստատիկա: Ստատիկայի աքսիոմները: Կապեր, դրանց հակազդումները: Կապերի աքսիոմը: Ջուգամետ ուժահամակարգ: Ջուգամետ ուժահամակարգի հավասարակշռության երկրաչափական և անալիտիկ պայմանները: Ուժի մոմենտ կենտրոնի և առանցքի նկատմամբ: Ուժազույգերի տեսություն: Կամայական տարածական ուժահամակարգ: Կամայական տարածական ուժահամակարգի տրված կենտրոն բերման դեպքերը: Կամայական տարածական ուժահամակարգի հավասարակշռությունը: Կամայական հարթ ուժահամակարգի հավասարակշռությունը: Սահքի շփում: Շփման անկյուն և շփման կոն: Գլորման շփում:

Ջուգահեռ ուժերի կենտրոն: Ծանրության կենտրոն: Կետի կինեմատիկա: Շարժման տրման եղանակները: Հետագիծ: Արագության վեկտոր: Արագացման վեկտոր: Շոշափող և նորմալ արագացումներ: Պինդ մարմնի համընթաց շարժում: Պինդ մարմնի պտտական շարժում: Անկյունային արագություն, անկյունային արագացում: Մարմնի կամայական կետի արագությունը և արագացումը պտտական

շարժման դեպքում: Պինդ մարմնի հարթ (զուգահեռական) շարժում: Շարժման վերլուծումը բևեռի հետ միասին համընթացի և բևեռի շուրջը պտտականի: Կամայական կետի շարժման օրենքը, հետագիծը և արագությունը:

Կետի բարդ (բացարձակ) շարժում: Կորիոլիսի թեորեմը: Նյութական կետի դինամիկայի հիմնական օրենքները: Նյութական կետի դինամիկայի երկու հիմնական խնդիրները: Նյութական կետի շարժման դիֆերենցիալ հավասարումները: Նյութական կետի հարաբերական շարժման և հարաբերական դադարի հավասարումները: Ոչ ազատ նյութական կետի շարժման դիֆերենցիալ հավասարումները: Նյութական կետի ուղղագիծ տատանումներ: Ուժի իմպուլս: Նյութական կետի շարժման քանակ: Թեորեմ նյութական կետի շարժման քանակի փոփոխման վերաբերյալ: Նյութական կետի շարժման քանակի մոմենտ: Թեորեմ նյութական կետի շարժման քանակի փոփոխման վերաբերյալ: Ուժի աշխատանք և հզորություն: Նյութական կետի կինետիկ էներգիա և թեորեմ դրա փոփոխման վերաբերյալ: Մեխանիկական համակարգ: Արտաքին և ներքին ուժեր: Ներքին ուժերի հատկությունները: Մեխանիկական համակարգի զանգված: Ջանգվածների կենտրոն: Մեխանիկական համակարգի իներցիայի մոմենտ: Մեխանիկական համակարգի շարժման դիֆերենցիալ հավասարումների համակարգը: Մեխանիկական համակարգի զանգվածների կենտրոնի պահպանման օրենքը: Մեխանիկական համակարգի շարժման քանակ: Թեորեմ մեխանիկական համակարգի շարժման քանակի փոփոխման վերաբերյալ: Մեխանիկական համակարգի շարժման քանակների գլխավոր մոմենտ: Մեխանիկական համակարգի շարժման քանակների գլխավոր մոմենտի վերաբերյալ թեորեմը և դրա հետևանքները: Մեխանիկական համակարգի կինետիկ էներգիա: Թեորեմ մեխանիկական համակարգի կինետիկ էներգիայի փոփոխման վերաբերյալ: Դալամբերի սկզբունքը: Նյութական կետի իներցիայի ուժ: Դալամբերի սկզբունքը նյութական կետի և մեխանիկական համակարգի համար: Լագրանժի հավասարումները: Մեխանիկական համակարգի ընդհանրացված կոորդինատներ, ընդհանրացված արագություններ և ընդհանրացված ուժեր: Լագրանժի առաջին և երկրորդ սեռի հավասարումները:

5. Ինֆորմատիկա և ինֆորմացիոն տեխնոլոգիաների հիմունքներ – 120 ժամ, 4 կրեդիտ

Դասընթացի առարկան, խնդիրները, ինֆորմատիկայի դերը, համակարգիչների տեսական հիմունքները:

Համակարգիչների ստեղծման ու զարգացման փուլերը: Ֆունկցիոնալ սարքերի տրամաբանական ֆունկցիաները, սարքի տրամաբանական սխեման: Տրամաբանական դիզյունկցիա, կոնյունկցիա և բացասում գործողությունները:

Համակարգիչների տեխնիկական ապահովումը, ներքին և արտաքին սարքեր, պրոցեսոր:

Ինֆորմատիկայի մուտքագրման սարքեր (ստեղնաշար, ուղղորդիչ՝ մկնիկ, ցուցարկու՝ դիսփլեյ, տեսագիր՝ սկաներ և այլն);

Ինֆորմատիկայի ելքավորման սարքեր (ցուցարկու, տպիչ և այլն);

Արտաքին հիշասարք (ինֆորմացիայի երկարատև պահպանման սարքեր);

Ինֆորմացիայի հաղորդման սարքեր (մոդեմ, ֆաքս և այլ տիպի տերմինալներ):

Համակարգիչների ծրագրային ապահովումը:

Համակարգային ծրագրեր՝ օպերացիոն համակարգեր, ծրագրեր-թաղանթներ,

դրայվերներ և ուտիլիտներ: Գործիքային ծրագրային ապահովումը որպես ծրագրավորման համակարգ, ծրագրավորման լեզվի համակարգը, ծարագրավորման միջավայրի համակարգը, ստանդարտ ֆունկցիաների գրադարանը և այլն: Իսկ կիրառական ծրագրային ապահովումը պարունակում է ստանդարտ ծրագրերի գրադարանը, օգտագործողի կիրառական ծրագրերը և կիրառական ծրագրերի փաթեթները:

Ալգորիթմացում, խնդիրների լուծման ալգորիթմների կառուցման մեթոդները: Ալգորիթմի հատկությունները:

Հաշվողական գործընթացների տեսակները, ալգորիթմի նկարագրման եղանակները, ալգորիթմի որակի որոշման եղանակները, ալգորիթմի մշակման փուլերը և կարգը:

Ծրագրավորում: Ծրագրավորումը որպես ինֆորմատիկայի ճյուղ, ծրագրեր կազմելու մեթոդներն ու ձևերը: Ծրագրավորման լեզուների դասակարգումը, ծրագրավորման լեզվի տարրերը, ծրագրավորման լեզվի կառուցվածքները, ծրագրերի մշակումը, ծրագրի կատարման փուլերը:

Համակարգչային համակարգեր և ցանցեր: Համակարգչային ցանցեր, նրանց տիպերը: Տեղային, բաշխված, մոլորակային և նրանց տեխնիկական ու ծրագրային ապահովումը:

6. Գծագրական երկրաչափություն և ճարտարագիտական գրաֆիկա -330 ժամ, 11 կրեդիտ

Գծագրական երկրաչափություն

Ներածություն: Պրոյեկտման մեթոդները: Ուղղանկյուն պրոյեկտում: Մոնոփ էպյուր: Կետի, ուղղի, հարթության և բազմանիստերի պրոյեկտումը: Դիրքային խնդիրներ: Մետրական խնդիրներ: Գծագրական երկրաչափության մեջ կիրառվող մեթոդները: Բազմանիստեր: Կոր գծեր: Մակերևույթներ, պտտման մակերևույթներ: Դիրքային և մետրական խնդիրներ: Պտտուտական մակերևույթներ: Մակերևույթների փռումը: Աքսոնոմետրիկ պրոյեկցիաներ:

Ճարտարագիտական գրաֆիկա

Կոնստրուկտորական փաստաթղթեր: Գծագրերի ձևակերպումը: Երկրաչափական գծագրություն: Տեսքեր, գրառումներ, նշանակումներ: Աքսոնոմետրիկ պրոյեկցիաներ: Մեքենամասերի տարրերի պատկերումը և նշանակումները: Միացումների պատկերումը: Քանդովի միացումներ: Ոչ քանդովի միացումներ: Մեքենամասերի էքսիզավորում: Մեքենամասերի աշխատանքային գծագրերի կազմում: Հավաքական միավորների պատկերումը: Հավաքական գծագրերի մասնատում: Շինարարական գծագրության տարրեր:

7. Համակարգչային գրաֆիկա - 90 ժամ, 3 կրեդիտ

Համակարգչային գրաֆիկա առարկան, դերն ու խնդիրները, զարգացման ուղղություններն ու հեռանկարները: Նախագծման ավտոմատացված համակարգեր, գոյություն ունեցող ծրագրերը (AutoCAD, Unigraphics, ProEngineer, StutCAD և այլն) և դրանց համեմատական գնահատականը: AutoCAD ծրագրային փաթեթի հիմունքները և հնարավորությունները: AutoCAD-ի պատուհանը: Համակարգչային մենյուներ: Գործիքային վահանակներ: Հրամանների և կարգավիճակի տողեր: Աշխատանքային միջավայրի կարգավորումը: Կոորդինատների համակարգերը, դրանց ընտրությունը, չափման միավորների ընտրությունը, գծագրի սահմանների

դույնական և մետրական համակարգեր: Մասշտաբների ընտրություն: Երկրաչափական օբյեկտների կառուցման հիմնանները: Կառուցման ռեժիմները (երկչափ համակարգում): Շերտեր և դրանց առավելությունները: Օբյեկտներ գործիքաշարքը: Խնբագրման հիմնանները: Էկրանային պատկերի կառավարումը և տեքստի ստեղծումը: Չափերի կիրառումը, երկրաչափական չափեր և թույլտվածքներ: Չափերի խնբագրումը: Չափերի ոճի և չափային համակարգային փոփոխականներ: Տեսքային էկրանները մոդելի տարածության մեջ և թղթի տարածության մեջ: Ինֆորմացիայի ելքը տպագրման և գծագրման միջոցով: Գծագրի ելքը տպիչի (Plotter) վրա: Գծագրի դիրքի ընտրությունը և թղթի չափերը: Տեքստի ավելացումը գծագրերին: Գրառումները գծագրերում: Բլոկներ, դրանց կոնցեպցիան և առավելությունները: Օբյեկտների խնբավորում և խնբագրման հիմնանները: Տվյալների փոխանակում, կապերի խնբագրում, երկրաչափական հաշվիչ: Եռաչափ երկրաչափական օբյեկտների և մարմինների մոդելավորում: Եռաչափ մակերևույթների կառուցում: Եռաչափ ֆիգուրների ստեղծում: Կտրվածքներ: Ռենդերինգը (Render) և անիմացիոն եռաչափ գծագրությունում: Հեռանկարի ստացումը: Եռաչափ մոդելի ռենդերինգը: Եռաչափ ֆիգուրների դինամիկ դիտարկում: Օբյեկտների երանգավորում: Տարածական ֆիգուրների խնբագրումը: Ստանդարտ գծագրեր՝ տեսքեր վերևից, առջևից և ձախից: Բանվորական գծագրերի մշակում (հանգույցի հավաքական գծագիր և մեքենամասերի մասնատում):

8. Մաթեմատիկական մոդելավորում – 90 ժամ, 3 կրդիտ

Ներածություն, դասընթացի առարկան, խնդիրները և նպատակը: Մոդելավորման հիմնական ուղղությունները:

Գծային ծրագրավորման հիմնական խնդիրները (ԳԾԽ), նրա սատոնդարտ և կանոնական ձևերը: Գծային ծրագրավորմանը բերվող խնդիրների օրինակներ: ԳԾԽ-ի լուծման երկրաչափական և սիմպլեքս եղանակները: Երկակի խնդիրների կազմումը, նրանց տնտեսագիտական մեկնաբանությունները: Գծային ծրագրավորման տրանսպորտային խնդրի ձևակերպումը և լուծման մեթոդները: Ոչ գծային ծրագրավորման խնդիրների օրինակներ:

Արտադրական ֆունկցիաներ, նրանց տեսակները: Էկոնոմիկա-մաթեմատիկական մոդելների դասակարգումը, օպտիմալության չափանիշի ընտրությունը, փոփոխականների և սահմանափակումների համակարգը:

Էկոնոմիկո-մաթեմատիկական մոդելավորումը տրանսպորտային փոխադրումների գործընթացում: Ցանցային պլանավորման խնդրի կիրառումը երթուղիների ընտրության խնդիրներում:

Տնտեսագիտական պրոցեսների մոդելավորումը ագրոարդյունաբերական համալիրում, կապված փոխադրումների օպտիմալ կազմակերպման հետ: Օպտիմալ տարբերակի որոշման խնդիրների մաթեմատիկական մոդելների մշակումը: Արտադրության օպտիմալ մասնագիտացման և տեղաբաշխման խնդրի մոդելավորումը:

Գյուղատնտեսական նշանակության փոխադրումների օպտիմալ կազմի որոշման, համալրման և օգտագործման խնդիրների առանձնահատկությունները և մոդելավորումը: Մոդելավորման հեռանկարային ուղղությունները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ

Հանրապետական բաղադրիչ

1. Մեքենաների և մեխանիզմների տեսություն – 210 ժամ, 7 կրեդիտ

ՄՍՏ հիմնական հասկացությունները: Մեխանիզմների կառուցվածքային վերլուծությունը, դրա մեթոդները և սինթեզը: Մեխանիզմների շարժունակությունը և կապերը: Հարթ մեխանիզմների դասակարգումն ըստ Ասուրի և Արտոբուլասկու: Մեխանիզմների կինեմատիկական ուսումնասիրությունը, դրա մեթոդները: Մեխանիզմի դիրքերը, օղակների առանձին կետերի հետագծերը: Մեխանիզմների արագությունների և արագացումների պլանները և դրանց հատկությունները: Օղակների անկյունային արագությունները և անկյունային արագացումները, դրնաց որոշումը: Կինեմատիկական դիագրամներ: Գրաֆիկական դիֆերենցում և գրաֆիկական ինտեգրում: Մեխանիզմների կինեմատիկայի անալիտիկական ուսումնասիրությունը և դրանց մեթոդները: Մեխանիզմների ուժային վերլուծությունը: Մեխանիզմների ուժային հաշվարկի մեթոդը: Օղակների իներցիոն ուժերը հարթ մեխանիզմների մեջ: Հակազդումները կինեմատիկական զույգերում: Առաջնային օղակի կինեմոստատիկան: Ուժային պլանը հարթ մեխանիզմների համար: Բերված ուժեր և բերված մոմենտներ: Մեխանիզմների դինամիկական վերլուծությունը: Մեխանիզմի օղակների վրա ազդող ուժերի բնութագրերը: Մեխանիզմի կինետիկ էներգիան: Բերված զանգվածներ և բերված իներցիայի մոմենտ: Մեքենայական ագրեգատի շարժման հավասարումները և դրանց ինտեգրումը: Մեքենայի շարժման ուսումնասիրությունը էներգոզանգված դիագրամի (Վիտենբաուերի) մեթոդով: Մեքենաների և մեխանիզմների շարժման անհավասարաչափությունը: Միջին արագություն և շարժման անհավասարաչափության գործակից: Արագությունների կարգավորիչներ: Ջանգվածների հավասարակշռումը: Թափանցիվը որպես արագության կարգավորիչ, դրա հաշվարկը: Մեխանիզմների էներգետիկ բնութագրերը: Մեքենայի էներգետիկ բալանսի հավասարումը: Մեխանիկական օգգ: Բարձր կարգի մեխանիզմներ: Ատամնանիվային մեխանիզմներ: Ատամնանիվային մեխանիզմների դասակարգումը: Հիմնական երկրաչափական և որակական պարամետրերը: Ատամնանիվային բարդ մեխանիզմների կինեմատիկան: Տարածական ատամնանիվային մեխանիզմներ: Հիպերբոլիդալ և պտուտակավոր ատամնանիվային մեխանիզմներ: Բռունցքային մեխանիզմներ, դրանց դասակարգումը, կինեմատիկան և նախագծումը: Շփումը մեխանիզմների և մեքենաների մեջ: Շփման տեսակները:

2. Մեքենաների մասեր– 240 ժամ, 8 կրեդիտ

Ներածություն: Հիմնական հասկացություններ: Աշխատունակության չափանիշները և նախագծման հիմունքները:

Մեքենաների մասերի միացումները

Զբանդվող միացումներ: Հիմնական տեղեկություններ: Եռակցված, գամային, երաշխավորված ձգվածքով և այլ միացումներ: Հաշվարկն ըստ ամրության:

Քանդվող միացումներ: Պարուրակային, երիթային, շլիցավոր և սեղմակային միացումներ: Հիմնական տեղեկություններ և հաշվարկն ըստ ամրության:

Մեխանիկական փոխանցումներ

Հիմնական տեղեկություններ, դասակարգումը, ընդհանուր պարամետրեր: Շփական, ատամնավոր, որդնակային, փոկային և շղթայավոր փոխանցումներ: Փոխանցումների հաշվարկն ըստ ամրության:

Շարժմանը սպասարկող մեքենամասեր և հավաքական միավորներ

Լիսեռներ և սոնիներ: Ընդհանուր տեղեկություններ: Հաշվարկն ըստ ամրության, կոշտության և տատանման: Առանցքակալներ: Սահքի առանցքակալներ: Ընդհանուր տեղեկություններ: Հաշվարկը ըստ ամրության: Ստուգումն ըստ տաքացման: Գլորման առանցքակալներ: Ընդհանուր տեղեկություններ: Հաշվարկը և ընտրությունը ըստ ստատիկ և դինամիկ բեռնունակության: Մեխանիկական կցորդիչներ: Ընդհանուր տեղեկություններ: Հաշվարկը և նախագծումը: Ճկուն տարրեր: Ջսպանակների հաշվարկը:

3. Ամբարձիչ փոխադրական մեքենաներ –150 ժամ, 5 կրեդիտ

Ներածություն: Ամբարձիչ-փոխադրական մեքենաների կիրառման բնագավառները, դասակարգումը, տեխնիկական ցուցանիշները, աշխատանքային ռեժիմները, շարժաբերը:

Ամբարձիչ-մեքենաներ: Հատուկ նշանակության մեքենամասերն ու հանգույցները (մետաղաճոպաններ, բեռնատար շղթաներ, ճախարակներ, աստղանիվներ, բազմաճախարակներ, թմբուկներ, կեռեր, կեռի կախոցներ, բեռբռնիչ հարմարանքներ, դադարակներ՝ ճանկանվային, հոլովակավոր, արգելակներ՝ կոճղավոր, ժապավենային, սկավառակավոր, կոնական, բեռով փակվող), կառուցվածքը, հաշվարկը և ընտրությունը:

Ամբարձիչ մեքենաների հիմնական մեխանիզմների (բեռի բարձրացման, տեղաշարժման, պտտման, թռիչքի փոփոխման) սկզբունքային սխեմաները, կառուցվածքային առանձնահատկությունները, շարժաբերը, դիմադրությունների որոշումը, իներցիոն ուժերը, շարժիչի, ռեդուկտորի, արգելակի և կցորդիչների ընտրությունը:

Ամբարձիչ-մեքենաների մետաղական կառուցվածքների և կայունության հաշվարկի սկզբունքները:

Փոխադրական մեքենաների դասակարգումը: Բեռների տեսակները և ֆիզիկա-մեխանիկական հատկությունները: Քաշող, կրող, տանող, ձգող և հենոցային օրգան-ներ՝ հաշվարկը և ընտրությունը: Արտադրողականությունը և հզորության ծախսը: Կենտրոնացված և բաշխված դիմադրություններ: Նվազագույն ձգվածության որոշումը, շերտերի բեռնաթափման եղանակները, շղթաների դինամիկ բեռնվածքը: Քարշային հաշվարկ, շարժաբերի ընտրության, քաշող օրգանի ամրության հաշվարկ:

Պտուտակավոր փոխադրիչների հաշվարկը: Թեք հարթակներ, հոլովակավոր, թրթռացող փոխադրիչներ, պնևմո և հիդրո փոխադրիչներ՝ ընդհանուր տեղեկություններ:

Կարապիկներ: Կարապիկային տեղակայանքների հաշվարկը: Քարշակող տրակ-տորներ, բեռնիչներ՝ բանվորական օրգանները, հաշվարկի տարրերը:

4. Գյուղատնտեսության նյութատեխնիկական ապահովում – 90 ժամ, 3 կրեդիտ

Գյուղատնտեսության նյութատեխնիկական ապահովման խնդիրները և նշանակությունն արդի պայմաններում, հեռանկարները:

Նյութատեխնիկական ապահովման բազաներ՝ պահեստային և տարային տնտեսություններ: Նյութատեխնիկական ապահովման բազաների նշանակությունը և նյութերի իրացումը: Պահեստային տնտեսությունների դերը, նշանակությունը, պահեստների դասակարգումը, դրանց ներկայացվող տեխնիկաշահագործական պահանջները, պահեստի կառույցի տարրերը, դրանց նշանակությունը, օգտակար մակերեսի որոշումը: Տարային տնտեսություն, տարաների դերը, կառուցվածքը,

գյուղ.մթերքների տարաների դասակարգումը: Տարայի վրա կատարվող ծախսերի որոշումը:

Նյութատեխնիկական միջոցների պահպանման սարքավորումներ: Ընդհանուր պահանջներ, սարքավորումների տեսակները, դասակարգումը: Ամբարձիչ-փոխադրական մեքենաներ, հիմնական շահագործական ցուցանիշները, պահանջարկի որոշումը պահեստի համար:

Գյուղատնտեսական խոշոր տնտեսությունների ապահովումը նյութատեխնիկա-կան միջոցներով: Գյուղատնտեսական խոշոր տնտեսությունների ՄՏ պարկի կազմի որոշման եղանակները, պարկի ապահովումը պահեստամասերով և մեքենայացված լցավորող մեքենաներով: ՄՏ պարկում տրակտորներին և գյուղ.մեքենաներին պահպանման արտադրական մակերեսով ապահովումը: Գյուղատնտեսական տնտեսությունների ապահովումը վառելանյութով և քսանյութերով, դրանց սարքավորումներով:

Գյուղատնտեսական բեռներ և բեռնաշրջանառություն: Գյուղատնտեսական բեռների դասակարգումը և բնութագրերը: Գյուղատնտեսական բեռների ծավալի և բեռնաշրջանառության հաշվարկը: Բարձման-բեռնաթափման մեքենայացման միջոցների ընտրությունը, դրանց արդյունավետության և պահանջարկի որոշումը: Սպասարկող անձնակազմի հաշվարկը:

5. Էլեկտրատեխնիկա և էլեկտրոնիկայի հիմունքներ – 120 ժամ, 4 կրեդիտ

Ներածություն: Հաստատուն հոսանքի էլեկտրական շղթաներ և դրանց հաշվարկման եղանակներ: Փոփոխական սինուսոիդալ հոսանքի ստացումը: Պարամետրերը, գրաֆիկական և մաթեմատիկական պատկերումը: Գծային և ոչ գծային էլեկտրական շղթաների հաշվարկ: Փոփոխական էլեկտրական շղթայի հզորությունները: Հզորության գործակցի բարձրացումը: Եռաֆազ շղթաներ: Միացման սխեմաները, հզորությունները: Մագնիսական շղթաներ, դրանց վերլուծությունը և հաշվարկը: Տրանսֆորմատորների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, հիմնական պարամետրերը և աշխատանքային ռեժիմներ: Հատուկ տրանսֆորմատորներ: Հաստատուն հոսանքի մեքենաներ: Ասինխրոն եռաֆազ և միաֆազ մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Սինխրոն մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Էլեկտրամատակարարում: Էլեկտրական չափումներ և չափիչ գործիքներ:

Արդյունաբերական էլեկտրոնիկայի հիմնական տարրերը: Կիսահաղորդչային տարրերի հիմնական պարամետրերը: Կիսահաղորդչային ուղղիչներ, ուժեղարարներ, տրիգերներ: Իմպուլսային տեխնիկայի տարրեր: Իմպուլսային գեներատորներ: Թվային միկրոէլեկտրոնիկայի հիմունքներ:

Հասկացություն կիսահաղորդչային միկրոինտեգրալային սխեմաների և միկրոպրոցեսորների մասին: Տիրիստորային սարքեր: Հասկացություն էլեկտրոհաղորդակների կառավարման անկոնտակտ տիրիստորային ապարատների մասին:

6. Էլեկտրահաղորդակ – 120 ժամ, 4 կրեդիտ

Էլեկտրիֆիկացված մեքենաների և տեղակայանքների էլեկտրահաղորդակը: Գյուղատնտեսական մեքենաների մեխանիկական բնութագրերը: Գյուղատնտեսական արտադրության մեջ կիրառվող էլեկտրաշարժիչները և նրանց մեխանիկական բնութագրերը: Դինամիկայի էլեմենտները և անցողիկ ռեժիմները էլեկտրահաղորդակներում: Էլեկտրաշարժիչների մեխանիկական բեռնավորումը և ջերմային ռե-

ժիմը: Էլեկտրաշարժիչների աշխատանքային ռեժիմները և պահանջվող հզորության որոշումը: Հզորության գործակիցը գյուղատնտեսական էլեկտրատեղակայումներում: Կառավարման և պաշտպանիչ սարքեր: Էլեկտրահաղորդակների ավտոմատ կառավարումը: Էլեկտրաշարժիչների ընտրման ընդհանուր մեթոդիկան: Ավտոմատացված էլեկտրահաղորդակները անասնապահական և թռչնաբուժական արտադրական պրոցեսներում: Ավտոմատացված էլեկտրահաղորդակները դաշտավարության մեջ: Գյուղատնտեսական նշանակության նորոգման ձեռնարկություններում կիրառվող էլեկտրասարքավորումները: Գյուղատնտեսական նշանակության էլեկտրատաքացման և սառնարանային տեղակայանքների էլեկտրասարքավորումները: Էլեկտրասարքավորումների շահագործման ժամանակ անվտանգության ապահովման հարցերը:

7. Ավտոմատիկայի հիմունքներ – 90 ժամ, 3 կրեդիտ

Ներածություն: Ընդհանուր տեղեկություններ ավտոմատ կառավարման համակարգերի վերաբերյալ:

Ավտոմատիկայի էլեմենտներ, դրանց ստատիկ բնութագրերը և դասակարգումը: Տվիչներ, ռելեներ, ուժեղարարներ, կատարող մեխանիզմներ, տրամաբանական էլեմենտներ: Ավտոմոտացման օբյեկտներ և դրանց ընդհանուր հատկությունները: Ինքնահավասարման երևույթը ավտոմոտացման օբյեկտներում:

Ավտոմատ կառավարման համակարգեր, դրանց դինամիկ բնութագրերը: Ժամանակային և հաճախական բնութագրեր: Փոխանցման ֆունկցիա հասկացությունը: Էլեմենտար դինամիկ օղակներ, դրանց դասակարգումը և միացման եղանակները:

Ավտոմատ կառավարման համակարգերի կայունությունը: Գծային համակարգերի կայունության որոշման մեթոդները, կայունության չափանիշները, կարգավորման պրոցեսի որոկական ցուցանիշները: Ոչ գծային համակարգերի կայունության որոշման մեթոդները:

Տեղեմեխանիկայի հիմունքները: Տեղեմեխանիկայի միջոցների կիրառումը տրանսպորտային փոխադրումները կազմակերպելիս:

8. Մեխորացիայի հիմունքներ – 90 ժամ, 3 կրեդիտ

Ներածություն: Ոռոգման մեխորացիա: Ընդհանուր տեղեկություններ ոռոգման և ոռոգման համակարգերի մասին: Ոռոգման տեսակները, նրանց կիրառման պայմանները: Ոռոգման ազդեցությունը հողի, բույսի և գյուղ. մշակաբույսերի բերքատվության վրա: Գյուղ. մշակաբույսերի ոռոգման ռեժիմը: Գունարային ջրասպառման բաղադրիչները: Ջրասպառման որոշման մեթոդիկան: Ջրասպառման գործակիցը և նրա որոշման մեթոդիկան: Ջրման նորմերի սահմանումը: Հիդրոմոդուլի գրաֆիկի կազմումը և նրա կիրառման պայմանները: Գյուղատնտեսական մշակաբույսերի ջրման եղանակներն ու տեխնիկան: Ոռոգման համակարգը և նրա կառուցվածքը: Ոռոգման աղբյուրները և ջրի վերցման եղանակները: Գյուղ. մշակաբույսերի ոռոգման եղանակներն ու ջրման տեխնիկան: Պայքար հողերի աղակալման և գերխոնավացման հիմնական պատճառների դեմ: Հողերի աղակալման տեսակները: Հողերի մեխորացման մեթոդները: Աղակալված և ալկալի հողերի մեխորացիան լվացման միջոցով: Աղակալված հողերի լվացման դրենաժը, կիրառման պայմանները և տիպերը: Պայքար հողերի էրոզիայի դեմ: Էրոզիայի առաջացման պատճառները: Հողերի ջրային էրոզիայի դեմ պայքարի ագրոտեխնիկական միջոցառումները: Դարավանդների տեսակները, նրանց կիրառման պայմանները և հաշվարկը: Ոռոգման համակարգի շահագործումը: Չորացման մեխորացիա: Չորաց-

ման մեթոդները և եղանակները: Դրենաժների տեսակները: Դրենների միջև եղած հեռավորության և խորության որոշումը: Չորացման համակարգի ջրընդունիչները: Ջրընդունիչի անբավարարության պատճառները: Գետ - ջրընդունիչի կարգավորման մեթոդները: Չորացման համակարգի ճանապարհային ցանց: Ողողահովիտների մեկտրացիա, ողողահովիտների տիպերը և նրանց ճահճացման պատճառները: Գետերի թմբապատման աշխատանքները:

9. Հիդրավիկա և հիդրոմեքենաներ – 150 ժամ, 5 կրեդիտ

Ներածություն: Հիդրոստատիկա: Հիդրոստատիկական ճնշումը և նրա հատկությունները: Հեղուկի հարաբերական հանգիստը: Հիդրոստատիկական ճնշման ուժի մեծության և կիրառման կետի որոշումը հարթ և կոր մակերևույթների վրա: Արքիմեդի օրենքը, մարմինների լողալու պայմանը: Հեղուկների կինեմատիկա: Շարժման ուսումնասիրման մեթոդները: Հեղուկների շիթային շարժումը: Հոսքի հիդրավիկական տարրերը: Անխզելիության հավասարումը տարրական շիթի և ամբողջ հոսքի համար: Հիդրոդինամիկա: Շարժումների դասակարգումը: Հեղուկի շարժման հավասարումները իդեալական և իրական հեղուկների համար: Բեռնուլիի հավասարումը ամբողջ հոսքի համար: Էներգիայի տեղական և երկայնական կորուստները: Շարժման ռեժիմները: Լամինար շարժում: Տուրբուլենտ շարժում: Շեզիի բանաձևը: Խողովակաշարի հիդրավիկական հաշվարկը: Արտահոսումը անցքերից և կցափողերից հաստատուն և փոփոխական ճնշման տակ: Հիդրավիկական հարվածի երևույթը: Յուղման հիդրոդինամիկական տեսությունը: Հիդրավիկական մեքենաներ, դասակարգումը: Պոմպեր, պոմպային տեղակայանք, նրա աշխատանքային պարամետրերը: Կոնտրոնախույս պոմպեր, կոնստրուկցիաները, բնութագրերը, համատեղ աշխատանքը: Սխցային պոմպեր: Ռոտորային և այլ տիպի պոմպեր: Հիդրոհաղորդակներ: Հիդրոստատիկական և ծավալային հիդրոհաղորդակներ: Կոնստրուկցիաները և հաշվարկը:

10. Նյութագիտություն – 120 ժամ, 4 կրեդիտ

Պարզ մետաղներ: Մետաղների բնորոշ առանձնահատկությունները: Մետաղների ատոմային և բյուրեղային կառուցվածքը: Մետաղների առաջնային և երկրորդային բյուրեղացումը: Մետաղների կոփումը և վերաբյուրեղացում: Երկակի համաձուլվածքների վիճակի դիագրամներ, տեսակները և վերլուծությունը:

Երկաթ-ածխածնային համաձուլվածքների ֆազերն ու ստրուկտուրաները, վիճակի դիագրամի վերլուծությունը: Ածխածնային պողպատների դասակարգումը և մակնիշավորումը: Թուջեր, ստրուկտուրան և հատկությունները:

Պողպատների ջերմամշակման տեսությունը, ջերմամշակման եղանակները: Պողպատի հիմնական փոխակերպումները:

Պողպատների ստրուկտուրան տաքացումից և սառեցումից հետո:

Պողպատների ջերմամշակման տեխնոլոգիան:

Պողպատի ջերմաքիմիական մշակում, պողպատի ցեմենտացումը, տեսակները, ջերմամշակումը: Պողպատի ազոտացումը, նիտրոցեմենտացումը, նիտրոցեմենտացումը և ցիանացումը: Լեգիրացված պողպատներ: Լեգիրող տարրերի ազդեցությունը պողպատներում տեղի ունեցող փոխակերպումների վրա: Լեգիրված պողպատների դասակարգումը և մակնիշավորումը: Կոնստրուկցիոն լեգիրված պողպատների դասակարգումը և մակնիշավորումը: Կոնստրուկցիոն լեգիրված պողպատներ: Գործիքային լեգիրված պողպատներ: Հատուկ ֆիզիկա-քիմիական

հատկություններ ունեցող պողպատներ:

Մետաղակերաքիմիական կարծր համաձուլվածքներ:

Գունավոր մետաղների և համաձուլվածքներ: Պղինձը և նրա համաձուլվածքները՝ արույր և բրոնզ:

Ոչ մետաղական մեքենաշինական նյութեր:

Պլաստմասաներ: Ապակիներ: Ռետիններ:

11. Նյութերի դիմադրություն – 300 ժամ, 10 կրեդիտ

«Նյութերի դիմադրություն» դասընթացի դերն ու նշանակությունը և դրա տեղը ուսումնական պրոցեսում:

«Նյութերի դիմադրություն» առարկան ուսումնասիրում է շինարարական և մեքենաշինական կառուցատարրերի և դրանց մասերի ամրության, կոշտության, կայունության և դիմացկանության խնդիրները, որոշում է կառուցատարրերի առանձին մասերի նախագծման համար կտրվածքի չափերի ընտրության մեթոդները:

«Նյութերի դիմադրություն» առարկայի օրենքների և հիպոթեզների միջոցով կատարվում է մի շարք գործնական խնդիրների լուծումներ, դրանք են.

-առանձին կառուցվածքների և մեխանիզմների չափերի որոշումը,

-կառուցվածքների տնտեսապես արդյունավետ ձևի ընտրությունը,

-գյուղատնտեսական մեքենաների և շինարարական կառուցատարրերի և այլ սարքերի առանձին մասերի նախագծման գիտական մեթոդների հիմնավորումը:

«Նյութերի դիմադրություն» դասընթացի նպատակն է.

-ուսանողներին ծանոթացնել փորձնական և գործնական աշխատանքների կատարման հիմունքներին,

-ուսանողներին սովորեցնել արտաքին բեռնվածքի ազդեցության տակ գտնվող ճարտարագիտական կառուցվածքների ամրության, կոշտության, կայունության որոշման տեսություններն, որը թույլ է տալիս ճիշտ պատկերացնել ցանկացած կառուցվածքի և դրա բոլոր մասերի աշխատանքը, հնարավորություն է տալիս ստեղծել նապտակահարմար ձևի կառուցվածքներ:

-սովորեցնել ճիշտ նշանակել առանձին կոնստրուկցիաների չափերը և հակառակը՝ ստուգել գոյություն ունեցող կառուցվածքների չափերի բավարարությունը և տալ կառուցվածքների ձևի ու չափերի գնահատականը:

«Նյութերի դիմադրություն» դասընթացը հիմնականում հիմնվում է մաթեմատիկայի, տեսական մեխանիկայի, ֆիզիկայի ինչպես նաև քիմիայի օրենքների վրա: Նյութերի դիմադրության տեսական հետազոտությունների բոլոր ընդհանրացումները կատարվում են մաթեմատիկայի դրույթների օգնությամբ:

12. Կառուցվածքային նյութերի տեխնոլոգիա - 120 ժամ, 4 կրեդիտ

Սև և գունավոր մետաղների արտադրությունը, լցաբաշխումը, բյուրեղացումը և կիրառվող վառարաններն ու սարքավորումները: Համաձուլվածքների հալման վառարաններ: Չուլման արտադրություն, կիրառվող նյութերը և հանդերձանքը: Չուլման տարբեր եղանակները: Մետաղների տաք և սառը մշակումը ճնշմամբ և դեֆորմացմամբ: Նախապատրաստվածքների տաքացման սարքավորումները և վառարանների դասակարգումը: Համառոտ տեղեկություններ գլոցման, քարշման, կռման, մամլման, դրոշմման և ճնշմամբ մշակման այլ եղանակների հետ: Կիրառվող գործիքները, հարմարանքները և սարքավորումները: Հալումով և ճնշումով եռակցման առանձնահատկությունները: Եռակցման և հալապատման տարբեր եղա-

նակների համառոտ բնութագրերը, անհրաժեշտ նյութերը և սարքավորումները:

Եռակցման կարի որակի որակի վերահսկում: Ջողում: Մետաղակերամիկական, պոլիմերային և ռետինե մեքենամասերի պատրաստման տեխնոլոգիական առանձնահատկությունները:

Խառատային կտրիչի երկրաչափական և կտրման տարրերը: Գործիքանյութերի դասակարգումը: Կտրման պրոցեսին ուղեկցող երևույթները (տաշեղագոյացում, ջերմագոյացում, մակաճ): Կտրման ուժի բաղադրիչ մասերը: Կտրման արագությունը և գործիքի կայունությունը: Կտրմամբ մշակման հիմնական եղանակների (խառատային, գայլիկոնում, ռանդում, թործում, ֆրեզում, ձգում, հղկում) համառոտ բնութագրերը, առանձնահատկությունները, կիրառվող գործիքները և կտրման ռեժիմի տարրերը: Մշակման նոր տեխնոլոգիական պրոցեսներ՝ էլեկտրաքիմիական, էլեկտրաֆիզիկական և մակերևույթների պլաստիկ դեֆորմացմամբ:

Մետաղահատ հաստոցների դասակարգումը: Խառատային, գայլիկոնիչ, ռանդիչ, թործիչ, ձգիչ, ֆրեզիչ և հղկիչ խմբերի հաստոցների ստորաբաժանումը, այդ հաստոցների վրա կատարվող աշխատանքները և կիրառվող հարմարանքներն ու գործիքները:

13. Համափոխարինելիության հիմունքներ և տեխնիկական չափումներ –150 ժամ, 5 կրեդիտ

Համափոխարինելիության ընդհանուր սկզբունքները, սահմանումը և ձևերը (լրիվ և ոչ լրիվ, արտաքին և ներքին, ֆունկցիոնալ): Հիմնական հասկացություններ թույլտվածքների և նստեցվածքների մասին: Երկրաչափական պարամետրերի ճշգրտությունը մեքենամասերի պատրաստման և վերականգման ժամանակ:

Հարթ գլանային միացությունների համափոխարինելիությունը: Հարթ գլանային միացությունների ձևերը: Թույլտվածքների և նստվածքների միջազգային համակարգ: Հարթ գլանային միացությունների նստեցվածքների հաշվարկը և ընտրությունը:

Սելեկտիվ հավաքման մեթոդ: Գլորման շառավղային առանցկակալների թույլտվածքները:

Չափային շղթաների հաշվարկը: Տերմինները և սահմանումները:

Երիթային և շլիցային միացությունների համափոխարինելիությունը: Պարուրակային միացությունների համափոխարինելիությունը: Ամրացնող պարուրակները, նրանց հիմնական պարամետրերը:

Ատամնանիվային և որդնյակային փոխանցումներին ներկայացվող շահագործական պահանջները:

Ստանդարտացման համակարգը և էությունը: Ստանդարտների ձևերը և նրանց օբյեկտները: Ստանդարտացման մեթոդական հիմունքները: Ընդհանուր տեխնիկական ստանդարտներ (ЕСДП, ЕСКД, ЕСТД և այլն):

Տեխնիկական չափումների հիմունքները: Չափագիտություն, նրա նշանակությունը մեքենաների որակի ապահովման գործում: Ունիվերսալ չափիչ միջոցներ: Տրամաչափեր (կալբիրներ):

14. Վառելանյութեր և քսանյութեր - 120 ժամ, 4 կրեդիտ

Առարկայի խնդիրներն ու նպատակը, կիրառվող տերմինները, շարժիչային և հնոցային վառելանյութերի, քսայուղերի և քսուկների նշանակությունը, դասակարգումը, մակնիշավորումը և արտասահմանյան համարժեքների հետ համափոխարինելիությունը, հումքերը, ստացման, վերամշակման և մաքրման եղանակները, բա-

ղա-դրությունը և տարրական կազմը, ֆիզիկաքիմիական հատկությունները, կիրառելիության ոլորտները և սահմանափակիչները, վառելանյութերի ջերմաստեղծ ունակությունները, այրման առանձնահատկությունները, դրանց նշանակությունից և օգտագործման պայմաններից կախված այրման արգասիքների կազմը, դրանց բացասական ազդեցությունը շրջապատող միջավայրի վրա և վտանգավորության նվազեցման հնարավոր ու կիրառվող մեթոդները այլընտրանքային շարժիչային վառելանյութերը և դրանց կիրառումը սահմանափակող գործոնները, վառելանյութերի և քսանյութերի որակի գնահատման ցուցանիշները և մեթոդները, դրանց պահպանման և ռացիոնալ օգտագործման, փոխադրման, ուտիլիզացման կանոնները, տեխնիկական հեղուկների տարատեսակները, նշանակությունը, դասակարգումը, մակնիշավորումը և կիրառելիության ոլորտները:

15. Ջերմատեխնիկա - 120 ժամ, 4 կրեդիտ

«Ջերմատեխնիկա» առարկան: Նրա կիրառությունը և կապը գյուղատնտեսության արտադրության տարբեր բնագավառների հետ: Թերմոդինամիկայի հիմունքները և հիմնական օրենքները: Էներգիայի փոխակերպման պրոցեսներ: Իրական գազեր, դրանց կիրառությունը: Ջերմային մեքենաների տեսական աշխատանքային ցիկլեր: Ներքին այրման շարժիչների իդեալական ցիկլերի աշխատանքային պայմանները: Դրանց համեմատական գնահատման վերլուծություն: Ջերմատեխնիկական տեսության հիմնական դրույթներ: Ջերմահաղորդականություն: Կոնվեկտիվ ջերմափոխանակում: Ջերմային ճառագայթում: Բարդ ջերմափոխանցում: Ջերմափոխանցման ապարատների հաշվարկ: Ջերմափոխանցման ինտենսիվացման ուղիները: Էներգիայի աղբյուրներ: Վառելիքի տեսակներ և բնութագրեր, դրա այրման պրոցեսի հաշվարկ: Էներգիայի այլընտրանքային աղբյուրներ: Ջերմաուժային սարքավորումներ: Կոմպրեսորներ և սառնարանային սարքավորումներ: Կաթսայական տեղակայանքներ: Մխոցավոր և տուրբինային ջերմային մեքենաներ: Էներգոտեսուրսների տնտեսման հիմնական ուղղությունները:

16. Կենսագործունեության անվտանգություն – 90 ժամ, 3 կրեդիտ

Ներածություն: «Կենսագործունեության անվտանգություն» առարկայի դերը, նպատակն ու խնդիրները: «Մարդ-մեքենա-միջավայր» համակարգը: Վտանգավոր և վնասակար արտադրական գործոնների բնութագիրը և առողջ ու անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծման հիմնական ուղիները: «Կենսագործունեության անվտանգության» բնագավառին վերաբերող նորմատիվա-իրավական փաստաթղթերը, հիմնական օրենսդրական ակտերը, աշխատանքային, քաղաքացիական և քրեական օրենսգրքերը: «Կենսագործունեության անվտանգության» ծառայության կառուցվածքը և խնդիրները, ղեկավարների և մասագետների իրավունքներն ու պարտականություններն այս բնագավառում: Արտադրական վնասվածության և մասնագիտական հիվանդությունների ուսումնասիրման մեթոդները, տնտեսական հետևանքները և գնահատման եղանակները: Աշխատատեղերի օդերևութաբանական և միկրոկլիմայական պարամետրերի նորմավորման սկզբունքները և նորմաները, չափման և հսկման միջոցներն ու եղանակները: Արտադրական աղմուկ, վիբրացիա և վնասակար ճառագայթումներ: Դրանցից պաշտպանվելու եղանակները, չափման և հսկման միջոցները: Ավտոմոբիլների, գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների, ագրեգատների և տեխնոլոգիական սարքավորումների շահագործման և նորոգման աշխատանքների անվտանգությունը: Էլեկտրահարվածից պաշտպանվելու կազմակերպչական միջոցառումներն ու տեխնիկական միջոցները: Անպրոպապաշտպանություն: Էներգաուժային և բեռնամբարձ տեղակա-

յանքների շահագործման անվտանգությունը: Հրդեհ, հրդեհների սոցիալ-տնտեսական հետևանքները: Շենքերի և շինությունների հրակայունությունը, դրա բարձրացման եղանակները: Կրակմարիչ տեխնիկա: տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Հակահրդեհային ահազանգում և ջրամատակարարում: Հրդեհի ժամանակ մարդկանց էվակուացիայի, նյութական միջոցների հեռացման և պահպանման կարգը:

17. Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգությունն արտակարգ իրավիճակներում – 150 ժամ, 5 կրեդիտ

Ներածություն: Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության համակարգը, խնդիրներն ու նշանակությունը: Քաղաքացիական պաշտպանության կառուցվածքն ու կազմավորումները: Արտակարգ իրավիճակներ, դրանց դասակարգումը, բնութագրերը և կանխարգելման ուղիները: Ռադացիոն և քիմիական վարակման օջախներ: Տեղանքի ռադիոակտիվ վարակում, ռադիոակտիվ վարակվածության աղբյուրները և ռադիոակտիվ ճառագայթման չափման միավորները: Մարտական թունավոր քիմիական նյութերի դասակարգումը, բնութագիրը, ներգործության ձևերը և դրանցից պաշտպանվելու ձևերը: Ռադիացիոն և քիմիական իրադրության գնահատման մեթոդները: Դոզաչափման և քիմիական հետազոտության սարքերի տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները: Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ և պատերազմական իրավիճակներում: Ապաստարաններ, հակառադիացիոն և պարզագույն թաքստոցներ: Անհատական պաշտպանական միջոցների տեսակները, դրանց պահպանման, բաշխման և օգտագործման կարգը: Արտակարգ իրավիճակների ռիսկի գնահատումը: Ռիսկի կվանտիֆիկացիան, անհատական ռիսկի ուսումնասիրման և գնահատման մեթոդները: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում գյուղատնտեսական օբյեկտների գործունեության կայունության ապահովման հիմնական ուղղություններն ու մեթոդները: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վթարային-վերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը: Գյուղատնտեսական արտադրության վարումը ռադիոակտիվ աղտոտվածության պայմաններում:

18. Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն – 60 ժամ, 2 կրեդիտ

Կենսոլորտը և մարդը: Էկոհամակարգեր, օրգանիզմի և միջավայրի փոխհարաբերությունները: Ագրոէկոհամակարգերը և դրանց գործելակերպը տեխնոգենեզիսի պայմանները: Շրջակա միջավայրի գլոբալ հիմնախնդիրները: Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և բնության պահպանության էկոլոգիական սկզբունքները: Միջազգային համագործակցությունը և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները: Մթնոլորտի օդը, ջրի, հողերի, բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունը և դրանց արդյունավետ օգտագործումը: Քիմիացման էկոլոգիական հիմնախնդիրները: Մեքենայացման, հողերի ոռոգման և չորացման էկոլոգիական հիմնախնդիրները: Երկրագործության ավանդական և այլընտրանքային համակարգերը: Էկոլոգիական տեսակետից անվտանգ գյուղատնտեսական մթերքների արտադրության տեխնոլոգիաները: Կայուն էկոհամակարգերի ստեղծման սկզբունքները: Ռեսուրսախնայողական տեխնոլոգիաները գյուղատնտեսության մեջ: Ագրոէկոլոգիական մոնիթորինգ, տարածքների էկոլոգիական վիճակի գնահատումը: Էկոլոգիական քաղաքականությունը և գյուղատնտեսության էկոլոգիացման հիմնախնդիրները:

19. Երկրագործության հիմունքներ– 120 ժամ, 4 կրեդիտ

«Երկրագործության հիմունքներ» առարկան ներառում է երեք բաժիններ՝

1. Հողագիտություն-հողը, հողերի առաջացումը, բերրիությունը:
2. Հողի կազմությունը, հատկությունները, հողի պրոֆիլի ձևավորումը և ձևաբանական հատկանիշները:
3. Հայաստանի Հանրապետության բնահողային գոտիները: Աղուտ-ալկալի, ճահճային, քարքարոտ հողերի մելիորացիան, հողի էրոզիան և պայքար նրա դեմ:
1. Երկրագործություն - բույսի կյանքի անհրաժեշտ գործոնները, պայմանները, բույսերի պահանջը դրանց նկատմամբ:
2. Երկրագործության օրենքները և ագրոտեխնիկան, բույսի կյանքի պայմանների կանոնավորումը երկրագործության մեջ:
3. Մոլախոտային բուսականությունը, հասցրած վնասները, կենսաբանական առանձնահատկությունները: Մոլախոտերի դասակարգումը և հաշվառման մեթոդները:
4. Մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումների ագրոտեխնիկական և քիմիական պայքարի զուգակցումը:
5. Ուսմունք ցանքաշրջանառության մասին, անհերթափոխ ցանքեր, մոնոկուլտուրա, միջանկյալ բույսեր:
6. Ցանքաշրջանառությունների դասակարգումը, տիպերը, տեսակները:
7. Մշակաբույսերի հաջորդականության պատճառները, մշակաբույսերի գնահատումը որպես նախորդ:
8. Հողի մշակման տեսական հիմունքները, խնդիրները, տեխնոլոգիական գործընթացները:
9. Հողի մշակման եղանակները և կատարման տեխնիկան: Մշակաբույսերի առանձնահատկությունները կապված հողի մշակման հետ:

Ագրոքիմիա -1. Պարարտանյութերի դասակարգումը, կիրառումը, պարարտացման համակարգեր:

2. Երկրագործության համակարգերը, ժամանակակից երկրագործության համակարգերի բաղկացուցիչ մասերը:

20. Բուսաբուծության և բանջարաբուծության հիմունքներ– 60 ժամ, 2 կրեդիտ

Բուսաբուծությունը որպես գիտության և արտադրության ճյուղ, նրա խնդիրները: Դաշտային մշակաբույսերի խմբավորումը: Շրջանացված սորտեր, նրանց կենսաբանական և մշակութային առանձնահատկությունները: Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների նկատմամբ առաջադրվող պահանջները: Գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության առանձնահատկությունները գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում:

Բանջարաբուծությունը որպես արտադրության ճյուղ: Կարևորագույն բանջարային բույսերի կենսաբանական առանձնահատկությունները, մշակության տեխնոլոգիաները բաց և փակ ջրանցում:

21. Մարգագետնաբուծություն – 60 ժամ, 2 կրեդիտ

Մարգագետնային բույսերի կենսաբանությունը, բնական կերային հանդակների գոտիական բաշխվածությունը: Յուրաքանչյուր գոտու բնակլիմայական և էկոլոգիա-կան պայմանների առանձնահատկությունները, բարելավման ու արդյու-

նավետ օգտագործման աշխատանքները, մեքենայացման մակարդակը և օգտագործվող մեքենաները: Մարգագետնային կերարտադրություն, բնական կերիանդակների դասակարգումը: Բնական խոտհարքները ու արոտավայրերի մակերեսային և արմատական բարելավման անհրաժեշտությունը, կատարման տեխնոլոգիաները:

22. Այգեպտղաբուծության հիմունքներ – 60 ժամ, 2 կրեդիտ

Պտղաբուծության կենսաբանական հիմունքները (պտղատու բույսերի կողմից աճման և զարգացման մեծ և փոքր շրջանների անցման և կիրառվող ագրոտեխնիկայի առանձնահատկությունները):

Տնկանյութի աճեցման տեխնոլոգիան՝ հողի նախապատրաստման, կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումների առանձնահատկությունները և օգտագործվող գյուղ. տեխնիկական պտղատու բույսերի տնկանյութի արտադրման ընթացքում:

Պտղատու այգու հիմնումը և խնամքը՝ հողի բարելավմանն ուղղված միջոցառումները և կիրառվող մեքենայական աշխատանքները պտղատու այգու հիմնադրման ժամանակ, պտուղների արտադրության ընթացքում միջշարքային և մերձբնային տարածությունների մշակության, ձևավորման, էտի, հիվանդությունների և վնասատուների դեմ տարվող պայքարի միջոցառումների, բերքահավաքի առանձնահատկությունները և օգտագործվող մեքենաներն ու գործիքներն:

Լաբորատոր պարապմունքներ.

1. Պտղատու բույսի կառուցվածքը, 2. պտղատուների կենսաբանական-արտադրական առանձնահատկությունների բնութագրումը, 3. պտղատու բույսերի ձևավորման և էտի գլխավոր սկզբունքները:

Խաղողագործություն:

Խաղողագործության կենսաբանական հիմունքները (խաղողի վազի կենսաբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, կենսաբանական ցիկլերը՝ վազի հարաբերական հանգստի և վեգետացիայի ժամանակաշրջանի վեց փուլերի նկարագրումը և այգու խնամքի աշխատանքների կազմակերպումը):

Խաղողի վազի էկոլոգիան՝ արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը վազի աճի և բերքատվության վրա:

Հողամասի ընտրությունը, նախապատրաստումը այգի հիմնադրելու և այգետնկման համար, բերքատու այգու խնամքը (հողամասի ընտրության և նախապատրաստման աշխատանքները, տեղաձևումը, այգու հիմնադրումը՝ օգտագործվող տնկանյութը, նրա նախապատրաստումը տնկման համար, տնկման եղանակները և տեխնիկան, ընթացքում կիրառվող գյուղ. մեքենաները, բերքատու այգու հողի մշակությունը, պարարտացումը, ոռոգումը, շապերայի հիմնադրումը, թեք լանջերի դարավանդումը և այդ աշխատանքները կատարելու համար կիրառվող գյուղ. տեխնիկան):

Լաբորատոր պարապմունքներ.

Խաղողի վազի արտաքին կառուցվածքը, վեգետատիվ բազմացման եղանակները և վազերի ձևավորման համակարգերը:

23. Անասնաբուծության հիմունքներ – 90 ժամ, 3 կրեդիտ

Անասնաբուծության նշանակությունը և վարման համակարգը: Գյուղատնտեսական կենդանիների ծագումը, ընտանեացումը և ցեղերը: Կենդանիների համակազմվածքի էությունը, արտակազմվածք և ներքնակազմվածք: Աճի ու զարգաց-

ման օրինաչափությունները: Մթերատվության և դրա վրա ազդող գործոնները: Նախիրների և հոտերի վերարտադրությունը, բուծման մեթոդները: Գյուղատնտեսական կենդանիների կերակրման հիմունքները: Կերերի սննդարարությունը և մարսելիությունը: Կերերի պատրաստման տեխնոլոգիական պահանջները: Կերի նորմալի և կերաբաժնի եռությունը և կիրառումը: Կերի բազայի ամրապնդման ուղիները: Անասնաբուծության հիմնական ճյուղերի համառոտ բնութագիրը, արտադրատեխնոլոգիական խնդիրները, վարման առանձնահատկությունները: Մթերքների և հումքի արտադրության արդյունա-վետության բարձրացման ուղիները: Կենդանիների պահվածքի տեխնոլոգիական լուծումները և սանիտարահիգիենիկ պահանջները:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ

(լսարանային - 843 ժամ, ինքնուրույն աշխատանք – 591 ժամ)

Հանրապետական բաղադրիչ

1. Գյուղատնտեսական և մելիորատիվ մեքենաներ – 390 ժամ, 13 կրեդիտ

Նկարագրական մաս:

Գյուղմեքենաշինության դերը գյուղատնտեսական արտադրության համար: Հողի ագրոֆիզիկական և տեխնոլոգիական հատկությունները: Մեքենաների կառուցվածքը և բանվորական գործընթացը՝ հողի մշակության, ցանքի և տունկի, պարարտացման, բույսերի պաշտպանությունը վնասատուներից և հիվանդություններից, կերային բույսերի նախապատրաստման, հացահատիկային և այլ մշակաբույսերի բերքահավաքի և բերքի հետբերքահավաքի ու պահպանման, արմատապալարապտուղների, բանջարեղենի, բոստանային մշակաբույսերի բերքահավաքի, մելիորատիվ մեքենաների (նոր հողերի յուրացման և կուլտուրատեխնիկական աշխատանքների, ոռոգման, բաց, հատկապես՝ փակ, չորացման համակարգերի շինարարության և շահագործման): Մեքենաների հիմնական կարգավորումները և աշխատանքի որակի հսկումը: Մեքենայացման միջոցների զարգացման միտումները:

Հաշվարկային մաս: Հողի, սերմերի, պարարտանյութի, բույսերի ֆիզիկա-տեխնոլոգիական հատկությունները, որոշման եղանակները և անհրաժեշտ պարամետրերի հաշվարկի համար փորձերով ստացված արդյունքների մաթեմատիկական մշակումը:

Հողի մշակության նորագույն տեխնոլոգիաները՝ զրոյական և նվազագույն: Հողի մշակության մեքենաների բանվորական գործընթացների տեսության հիմունքները: Ցանքի, տնկման և պարարտացման մեքենաներն տեսության և հաշվարկի հիմունքները: Հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ քիմիական պայքարի մեքենաների տեսության հիմունքները: Բերքահավաքի մեքենաների տեսության և հաշվարկի հիմունքները: Արմատապալարապտղի և բանջարեղենի բերքահավաքի մեքենաների տեսության և հաշվարկի հիմունքները: Հացահատիկային խառնուրդի զտման և տեսակավորման մեքենաների և սարքավորումների տեսության և հաշվարկի հիմունքները: Չորացման տեսության հիմունքները:

Մելիորատիվ մեքենաների դասակարգումը, նրանց բանվորական գործընթացները, անընդհատ գործողության մեքենաների առավելությունները և տեխնոլոգիական ու էներգետիկական հաշվարկի տարրերը: Ոռոգման մեքենաների տեսության ու հաշվարկի տարրերը, անձրևի ինտենսիվությունը, ոռոգման հավասարաչա-

փության պայմանները, շիթի հեռավորությունը:

2. Տրակտորներ և ավտոմոբիլներ-390ժամ, 13 կրեդիտ

Տրակտորների և ավտոմոբիլների կառուցվածքի հիմունքները.

Տրակտորների և ավտոմոբիլների դերը գյուղատնտեսական արտադրության համալիր մեքենայացման գործում, տրակտորների և ավտոմոբիլների սահմանումը, դասակարգումը և մակնիշավորումը, կիրառվող տերմինները, ընդհանուր կառուցվածքը՝ բաղկացուցիչները, դրանց նշանակությունը և հարմարադասման կիրառվող սխեմաները, շարժիչների սահմանումը և տարատեսակները, ավտոտրակտորային մխոցավոր ներքին այրման շարժիչների (ՆԱՇ) դասակարգումը և մակնիշավորումը, ընդհանուր կառուցվածքը՝ մեխանիզմներն ու համակարգերը, դրանց նշանակությունը, հարմարադասման կիրառվող սխեմաները, տարատեսակները, կառուցվածքը և աշխատանքը, շահագործական պայմանների նկատառումով ՆԱՇ-երին ներկայացվող պահանջները և դրանց ընտրության սկզբունքները ոչ ավանդական կառուցվածքի ՆԱՇ-երի տարարեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը; ՆԱՇ-երի արդիականացումը դրանցում այլընտրանքային վառելանյութերի կիրառման նպատակով տրակտորների և ավտոմոբիլների ուժային փոխանցումների ընթացքային մասերի, ղեկավարման համակարգերի, բանվորական և օժանդակ սարքավորումների նշանակությունը, տարատեսակները, հարմարադասման կիրառվող սխեմաները, կառուցվածքը և աշխատանքը:

Ավտոտրակտորային ՆԱՇ-երի տեսության հիմունքները.

Դասընթացի խնդիրները: ՆԱՇ-երի տեսական ցիկլերը, դրանց ցուցանիշերը և համեմատական բնութագրերը: ՆԱՇ-երի իրական ցիկլերը, դրանց առանձնահատկությունները, ցուցանիշները և համեմատական բնութագրերը: Շարժիչներում ընթացող իրական պրոցեսները, դրանց ընթացքի ազդեցությունը շարժիչի հզորությունային և շահավետային ցուցանիշների վրա, ջերմային բալանսը: Բանվորական ցիկլի գնահատման ցուցանիշները: Շարժիչի աշխատանքի գնահատման ցուցանիշները, աշխատանքի ռեժիմները, շարժիչների փորձարկումը և բնութագրերը: Արտածվող գազերում վնասակար արգասիքների քանակի նվազեցման և այլընտրանքային վառելիքների կիրառման հնարավորությունները, շարժիչների մեքենամասերի ուժային և ջերմային բեռնվածությունները և դրանց հաշվարկի մեթոդները:

Տրակտորների և ավտոմոբիլների տեսության հիմունքները.

Դասընթացի խնդիրներն ու նպատակը, տրակտորա- և ավտոմոբիլաշինության զարգացման հիմնական միտումները: Տրակտորների և ավտոմոբիլների շահագործական հատկանիշները և գնահատման ցուցանիշները: Տրակտորների և ավտոմոբիլների վրա ազդող արտաքին ուժերը, դրանց բնույթը և որոշման մեթոդները, շարժման հավասարումները: Անիվներին փոխանցվող տանող մոմենտ և շոշափող քարշիչ ուժ; նորմալ հակազդումներ: Թրթուրավոր շարժիչների կինեմատիկական առանձնահատկությունները, ճնշման կենտրոն, թրթուրների նկատմամբ նորմալ ճնշումների բաշխումը: Տրակտորի հզորության բալանս, ավտոմոբիլի դինամիկական գործոն և դինամիկական բնութագիր: Թափառքի ժամանակ և ճանապարհ, արգելակային դինամիկա, վառելիքային շահավետություն, տրակտորների և ավտոմոբիլների կայունություն, ընթացքի սահունություն:

3. Անասնապահական ֆերմաների մեքենայացում – 270 ժամ, 9 կրեդիտ

Անասնապահական ֆերմաների մեքենայացում դասընթացն ուսումնասիրում է անասնապահական ֆերմաների արտադրական գործընթացների մեքենայացման

համար օգտագործվող բոլոր մեքենասարքավորումների կառուցվածքը, աշխատանքը և տեսական հիմունքները:

Անասնապահական ու թռչնաբուժական ֆերմաների ընդհանուր կառուցվածքը:

Կերամշակման մեքենայացում՝ մուրճային մանրիչներ, ցողունային կերերի մանրման մեքենայացում, կերի արմատապտուղների մշակման մեքենաներ՝ լվացող-մանրող մեքենաներ, անասնակերերի չափավորիչներ, կերերի հատիկավորում, բրիկե-տավորում և ջերմային մշակում:

Կերաբաշխման մեքենայացում: Կերաբաշխիչներ, ջրամատակարարման մեքենայացում:

Գոմաղբի հավաքման-հեռացման մեքենայացում՝ համակարգերը և տեխնոլոգիական սխեմաները, ստացիոնար և շարժական կայանքներ, գոմաղբի հեռացման հիդրավլիկական եղանակ:

Գյուղատնտեսական կենդանիների կթի մեքենայացում՝ կթի մեքենաներ, կթի ագրեգատներ, օդահան պոմպ:

Կաթի նախնական մշակման մեքենայացում՝ կաթի սառեցուցիչներ, պաստերիզատորներ, սեպարատորներ, կաթի անհատական և խմբակային հաշվիչներ, նախնա-կան մշակման մեքենաներ և սարքավորումներ:

Ոչխարների խուզի մեքենայացում՝ մեքենայական խուզի ագրեգատներ, ոչխարների պրոֆիլակտիկ լողացման կայանքներ:

Անասնապահական ու թռչնաբուժական ֆերմաների սարքավորումների տեխնիկական սպասարկումը:

4. Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործում – 420 ժամ, 14 կրեդիտ

Գյուղատնտեսության զարգացման հիմնական հեռանկարները, գյուղ. տեխնիկայի շահագործման խնդիրները արդի էտապում: Մեքենատրակտորային ագրեգատների (ՄՏԱ) շահագործման տեսական հիմունքները: Արտադրական գործընթացները, ՄՏԱ բնութագրերը և դասակարգումը: ՄՏԱ դինամիկան, շարժման հավասարումը: ՄՏԱ համալրումը, կազմի ճշտումը և շահագործական ցուցանիշների որոշումը: Ագրեգատի կինեմատիկան, մանևրային հատկանիշները: ՄՏԱ շրջադարձի ձևերը և շարժման եղանակները, դաշտի կինեմատիկական պարամետրերի որոշումը: ՄՏԱ արտադրողականությունը, հերթափոխի ժամանակի բալանս, պայմանական էտալոնային տրակտոր և պայմ.էտ.հա: ՄՏԱ շահագործական ծախսեր:

ՄՏԱ շահագործումը բուսաբուծության մեջ: Մեքենայացված աշխատանքների տեխնոլոգիա: Հացահատիկի մշակության տեխնոլոգիան, պարարտանյութի մատուցման, հողի հիմնական և լրացուցիչ մշակության տեխնոլոգիաները և ՄՏԱ համալրումը: Հացահատիկի ցանքի, խնամքի և բերքահավաքի տեխնոլոգիաները, ՄՏԱ համալրումը: Եգիպտացորենի, շաքարի ճակնդեղի, դաշտային կերերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները, ՄՏԱ համալրումը:

Տրանսպորտը գյուղատնտեսական արտադրության մեջ, բեռներ, բեռնաշրջանառություն, բեռնահոսք, երթուղի, տրանսպորտային ագրեգատների համալրումը:

Մեքենաների տեխնիկական շահագործումը: Մեքենաների տեխնիկական բնութագրերը և անսարքությունները: Մեքենաների տեխնիկական սպասարկման համակարգը: Տեխնիկական ախտորոշումը: Մեքենաների պահպանման տեխնոլոգիան:

Մեքենատրակտորային պարկի (ՄՏՊ) շահագործման գծով ինժեներատեխնի-

կական ծառայությունը: ՄՏ պարկի կազմի հաշվարկը և նախագծումը, տեխնիկական շահագործման ծրագրավորումը և կազմակերպումը: ՄՏՊ ապահովումը վառելանյութով և քսանյութերով: Ինժեներատեխնիկական ծառայության կազմակերպումը:

5. Մեքենաների հուսալիություն և նորոգում -300 ժամ, 10 կրեդիտ

Ներածություն: Մեքենաների հուսալիության և նորոգման տեսական հիմունքները: Մեքենաների հուսալիության ֆիզիկական հիմունքները: Հուսալիության ցուցանիշների որոշման մաթեմատիկական մեթոդները:

Մեքենաների մերժումներն և անսարքությունները որպես պատահական դեպքեր: Պատահական մեծության բաշխման օրենքները հուսալիության և որակի մասին տեղեկությունների հավաքումը և մշակումը, բաշխման օրենքների հորինվածքը, համաձայնեցման չափանիշը, ճշգրտության գնահատումը, նորոգապիտանելիության ցուցանիշների գնահատումը և այլն: Մեքենաների փորձարկումը ըստ հուսալիության: Հուսալիության բարձրացման մեթոդները:

Մեքենաների և սարքավորումների նորոգման արտադրական գործընթացները:

Մեքենամասերի վերականգնման տեխնոլոգիական պրոցեսները, (պլաստիկ դեֆորմացմամբ, եռակցմամբ և հալապատմամբ, էլեկտրաքիմիական և քիմիական, պոլիմերային նյութերով, մեխանիկական մշակմամբ):

Տիպային ագրեգատների և հավաքովի միավորների նորոգումը:

Գյուղատնտեսական մեքենաների նորոգումը:

Անասնապահական ֆերմաների մեքենաների և սարքավորումների նորոգումը:

Նորոգման ձեռնարկությունների կազմակերպումը և նախագծումը:

Նորոգման ձեռնարկությունների տեխնիկատնտեսական ցուցանիշների որոշումը:

5. 310801 ԳՅՈՒՂ.ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԲՎԱԿԱԿՈՒ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման ժամկետը, ներառյալ ուսանողի հետազոտական աշխատանքը, առկա ուսուցման ձևով 242 շաբաթ է, որից.

- տեսական ուսուցումը` 150 շաբաթ;
 - քննաշրջանները` 27 շաբաթ;
 - պրակտիկաները 19 շաբաթ`
ուսումնական 4 շաբաթ;
արտադրական 10 շաբաթ;
- Նախադիպլոմային 5 շաբաթ:
- եզրափակիչ պետական որակավորումը, ներառյալ ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունը` 10 շաբաթ;
 - արձակուրդները (ներառյալ հետբուհական 8-շաբաթյա արձակուրդը)` 36 շաբաթ:
- Դիպլոմային նախագծի թեման ուսանողին հանձնարարվում է երրորդ կուրսում արտադրական պրակտիկա մեկնելուց առաջ և նշանակվում ղեկավար: Դիպլոմային նախագծի կատարման ժամանակացույցը, ընթացիկ վերահսկ-

ման և ատեստավորման ձևը, պաշտպանության թույլատրման կարգը սահմանում է (Ֆակուլտետը), որը հաստատում է բուհի գիտական խորհուրդը:

Նախօրոք կազմվում է նախագծի կատարման ժամանակացույցը, վերահսկվում է ամբիոնի կողմից կատարման ընթացքը, կազմակերպվում է նախնական պաշտպանություն, որից հետո թույլատրվում է պաշտպանության :

5.2. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող անձանց համար տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի յուրացման ժամկետները հեռակա ուսուցման ձևով երկարացվում են մինչև 1 տարի՝ սույն պետական կրթական չափորոշիչի թ.1.2- ով սահմանված ժամկետի նկատմամբ:

5.3. Ուսանողի ուսումնական բեռնվածքի առավելագույն ծավալը սահմանվում է շաբաթական 45 ժամ՝ ներառյալ լսարանային և արտալսարանային (ինքնուրույն) աշխատանքները:

5.4. Առկա ուսուցման ձևով սովորող ուսանողի լսարանային պարապմունքների ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 30 ժամ: Նշված ծավալում չեն ընդգրկվում ֆիզիկական կուլտուրայի և ֆակուլտատիվ դասընթացների դասաժամերը: Ուսումնական տարվա տեսական ուսուցման տևողությունը 34 շաբաթ է:

5.5. Հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողի համար պետք է ապահովվի տարեկան դասախոսների հետ 160 ժամից ոչ պակաս ծավալով պարապմունքներ անցկացնելը:

5.6. Ուսումնական տարվա արձակուրդները պետք է 7-10 շաբաթ լինեն, այդ թվում՝ 2 շաբաթից ոչ պակաս ձմեռային քննաշրջանից հետո:

6. 310801 ԳՅՈՒՂ.ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ - ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐԱՋՆԵՐԸ

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակմանը ներկայացվող պահանջները.

Սույն պետական կրթական չափորոշիչի հիման վրա բուհն ինքնուրույն է մշակում և հաստատում տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացների ուսումնառությունը պարտադիր է, իսկ նրանց ցանկը երաշխավորական բնույթ է կրում, որը կարող է փոփոխել կամ լրացնել բուհը:

Ուսումնական դասընթացի բաղադրիչների տեսակները (դասախոսություն, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ, տնային և կուրսային աշխատանքների խորհրդատվություն և այլն) և ծավալները դասընթացին հատկացված դասաժամերի շրջանակում սահմանում է բուհը: Ուսուցման ողջ շրջանում ուսումնական ժամաքանակի ընդհանուր հաշվեկշռում ակտիվ մեթոդներով ուսանողի տեսական ուսուցումը չպետք է ցածր լինի 25 % -ից:

Ուսանողի գիտելիքի ստուգման և գնահատման համակարգի տեսակն ընտրում է բուհը: Տվյալ դասընթացից ուսանողի գիտելիքների եզրափակիչ գնահատականը չպետք է հիմնավորվի միայն վերջին քննության (ստուգարքի) արդյունքով, այն պետք է հաշվի առնի ուսանողի ակտիվությունը դասընթացների և ընթացիկ առա-

ջադիմությունը կիսամյակի(ների) ընթացքում: Եզրափակիչ գնահատման դեպքում գնահատականի 40%-ը ձևավորվում է ընթացիկ առաջադիմությամբ և միջանկյալ ստուգումներով, իսկ 60 %-ը՝ եզրափակիչ քննության (ստուգարքի) արդյունքով:

Քննությունների անցկացման հիմնական ձևը գրավոր կամ գրավոր-բանավորն է: Բացառության կարգով կարող է սահմանել բանավոր քննություններ, բայց դրանք չպետք է գերազանցեն քննությունների ընդհանուր քանակի 25 % -ը: Բուհի իրավունքն է ուսումնական դասընթացների եզրափակիչ ստուգման եղանակի (ստուգարք կամ քննություն) ընտրությունը և ձևի սահմանումը:

Ուսանողների գիտելիքների ընթացիկ գնահատման համակարգում բուհն օգտագործում է իրեն նպատակահարմար գնահատման սանդղակ: Միջազգային մասնագիտական կրթական համակարգին ինտեգրվելու և ուսանողների ակադեմիական շարժունակությունն ապահովելու նպատակով ուսումնական գործընթացում գերադասելի է գիտելիքների ստացման և գնահատման վարկային (կրեդիտային) համակարգի ներդրումը և օգտագործումը: Դասընթացից եզրափակիչ գնահատական նշանակելու դեպքում անհրաժեշտ է անցնել գիտելիքների գնահատման ավանդական համակարգին («գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար», «ստուգված», «չստուգված»):

Կուրսային աշխատանքը դիտարկվում է որպես դասընթացի ուսումնական բաղադրիչ և իրականացվում է այդ դասընթացին հատկացրած դասաժամերի հաշվին: Հիմնական մասնագիտական դասընթացներից կուրսային աշխատանքի կատարելը պարտադիր է, բայց ուսուցման ողջ շրջանում դրանք չպետք է գերազանցեն 5-ը:

Մասնագիտության ուսումնական պլանով (հավելված 2) նախատեսված բոլոր ուսումնական դասընթացների, կուրսային աշխատանքների և պրակտիկաների համար պարտադիր է եզրափակիչ գնահատականի նշանակումը:

Մասնագիտացման դասընթացների կրթաբլոկը ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկի տրամաբանված հաջորդականությունն է, որը ընտրած մասնագիտությամբ նախատեսված գործունեության բնագավառներում նպաստում է ուսանողի խոր մասնագիտական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը: Այն մասնագիտությունների գծով, որոնց անվանման մեջ առկա է (ըստ ճյուղերի) արտահայտությունը, ընտրած բնագավառի համար շրջանավարտի պատրաստման առանձնահատկությունները առաջին հերթին հաշվի են առնվում մասնագիտացման դասընթացների միջոցով: Բուհը պետական կրթական չափորոշիչի հավելված 1-ում տրված ցանկից ինքնուրույն է ընտրում իրեն համապատասխանող մասնագիտացումը և իրավունք ունի փոփոխելու կամ լրացնելու մասնագիտացման դասընթացների ցանկը, կամ էլ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչը մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած՝ ձևավորելու նոր մասնագիտացում:

Ֆակուլտատիվ դասընթացների կրթաբլոկի ցանկը նույնպես երաշխավորական բնույթ է կրում և ուսանողի համար պարտադիր չէ, իսկ դրանց հաճախելու դեպքում կրթաբլոկն հատկացրած ժամաքանակների 30%-ին վերաբերվող դասընթացներից պարտադիր է ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը:

Մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու դեպքում բուհն իրավասու է՝

- 5%-ի սահմաններում փոփոխել դասընթացների կրթաբլոկներին հատկացրած ժամաքանակները, իսկ առանձին դասընթացներինը՝ մինչև 10%-ի սահմաններում,

- ձևավորել հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթաբլոկ, որի հանրապետական բաղադրիչներում նշվածներից 12-ից պարտադիր է հետևյալ դասընթացների առկայությունը՝

Հայ ժողովրդի պատմություն
 Փիլիսոփայություն
 Հայոց լեզու և գրականություն
 Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ
 Օտար լեզու
 Ֆիզիկական կուլտուրա

Մնացած դասընթացները կարող են ընդգրկվել ըստ բուհի հայեցողության: Այս դեպքում հնարավոր է նրանց միջդասընթացային միավորումը՝ բովանդակության պարտադիր նվազագույնի պահպանմամբ:

Եթե դասընթացը ընդհանուր մասնագիտական կամ մասնագիտացման դասընթացների կրթաբլոկի մի մասն է կազմում, դրա համար հատկացված ժամերը վերաբաշխվում են ՀՍՏ դասընթացների վրա:

Ֆիզիկական կուլտուրայի պարապունքները հեռակա և դրսեկության ձևերով ուսումնառող ուսանողների համար կարող են իրականացվել նրանց ցանկությամբ:

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ) դասընթացների դասավանդումն իրականացնել հեղինակային դասախոսությունների, անհատական և կոլեկտիվ գործնական պարապունքների, առաջադրանքների և սեմինարների ձևով՝ բուհի մշակած ծրագրերով, հաշվի առնելով բուհի մասնագիտական առանձնահատկությունները, դասախոսների հետազոտական ուղղվածությունը և հակումները, որոնք կապահովեն կրթաբլոկի դասընթացների թեմատիկայի լուսաբանումը՝ ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը համապատասխան,

- սահմանել ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸԲ) կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների առանձին բաժինների դասավանդման անհրաժեշտ խորությունը՝ կրթաբլոկների դասընթացների ուղղվածությանը համապատասխան և մասնագիտության առանձնահատկությունների հաշվառմամբ: ԸՄ կրթաբլոկում պարտադիր է «Քաղ. պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի դասավանդումը: Բուհական բաղադրիչներին առանձնացված ժամաքանակները բուհի հայեցողությամբ կարող են օգտագործվել հանրապետական բաղադրիչներում ընդգրկված դասընթացների ավելի խորը դասավանդման համար,

- իրականացնել 310801 գյուղ. մեքենայացում մասնագիտությամբ ճարտարագետ-բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը կրճատված ժամկետով՝ համապատասխան ուղղվածության միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող ուսանողների համար: Ուսուցման ժամկետների կրճատումը կատարվում է մասնագիտական կրթության նախորդ աստիճանում ուսանողների ձեռք բերած գիտելիքների, ունակությունների և հմտությունների հիման վրա: Այդ դեպքում ուսուցման տևողությունը 2 (երկու) տարուց պակաս չպետք է լինի: Կրճատված ժամկետով ուսուցումը թույլ է տրվում նաև այն անձանց, որոնց կրթական մակարդակը և բացառիկ ընդունակությունները բավարար հիմք են նման ուսուցում իրականացնելու համար,

- առանձին դեպքերում, մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող ԿԳՆ գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցված 310801 Գյուղ. մեքենայացում մասնագիտության համար բուհերն իրավունք ունեն

մինչև 20%-ի սահմանում փոփոխել ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄԴ) կրթաբլոկի ժամաքանակը, իսկ առանձին դասընթացները՝ մինչև 40%-ի սահմաններում:

6.2. Ուսումնական գործընթացի կադրային ապահովման պահանջներ

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, որոնք, որպես կանոն, ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությամբ համապատասխանող բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս) և հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտա-մեթոդական գործունեությամբ: Հատուկ մասնագիտացնող դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, պետք է ունենան գիտական աստիճան (գիտական կոչում, պատվավոր կոչում և այլն) և կամ համապատասխան գործունեության ոլորտում աշխատանքի փորձ:

Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսները կազմում են պրոֆեսորադասախոսական կազմի 50%-ից ոչ պակասը:

Հիմնական հաստիքային դասախոսները և 0,25 հաստիքից բարձր ձևակերպված համատեղողները նույնպես կազմում են ընդհանուրի 50%-ից ոչ պակասը:

6.3. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման պահանջները

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ներառի ուսանողների կողմից մասնագիտական դասընթացների լաբորատոր, գործնական (սեմինար) աշխատանքների կատարում, ներառյալ որպես պարտադիր բաղադրիչ՝ համակարգչային կիրառական ծրագրային փաթեթների օգտագործմամբ գործնական առաջադրանքների կատարում:

Մասնագիտական դասընթացների լաբորատոր, գործնական (սեմինար) աշխատանքների ցանկ.

- տրակտորների սպասարկման կանոնները,
- գազաբաշխման մեխանիզմի տեխնիկական վիճակի ստուգումը և նրա կարգավորումները,
- դիզելային շարժիչների սնման համակարգի հանգույցների ստուգումը և կարգավորումը,
- շարժիչների գլան-մխոցային խմբի տեխնիկական վիճակի գնահատումը առանց քանդման,
- վարի ագրեգատի դաշտային փորձարկումը,
- ավտոտրակտորների և ԱՏՄ ընդհանուր կառուցվածքն ու շարժման մեխանիկան,
- ներքին այրման շարժիչների ընդհանուր կառուցվածքը և աշխատանքային պրոցեսը,
- շուռտվիկշարժաթևային և գազաբաշխման մեխանիզմներ,
- կարբյուրատորային և գազային շարժիչների սնման համակարգ,
- դիզելային շարժիչների սնման համակարգ,
- հովացման համակարգ,
- յուղման համակարգ,
- ԱՏՄ էլեկտրասարքեր,
- տրանսմիսիսա,
- կցորդման ագույց,

- փոխանցումների տուփ, բաժանարար տուփ: ՌՄԱ,
- կարդանային և գլխավոր փոխանցումներ, դիֆերենցիալ,
- ընթացքային մաս,
- դեկի վարման համակարգ,
- արգելակային համակարգ,
- մասնագիտացված շարժակազմ,
- թափքեր, կցորդներ և կիսակցորդներ,
- տրակտորների հիդրավլիկական կախովի համակարգ և բանող սարքավորումներ,
- գյուղատնտեսական նյութերի ֆիզկամեխանիկական, տեխնոլոգիական հատկանիշների որոշում,
- գյուղատնտեսական մեքենաների կառուցվածքի ուսումնասիրում, կարգավորում և գործարկում,
- մեքենաների բանող օրգանների պարամետրերի հաշվարկում և նախագծում, տեխնոլոգիական սխեմաների կազմում:

Պարտադիր պահանջ է նաև անհրաժեշտ ինֆորմացիոն բազայի ստեղծումը, որն ապահովում է բարձրորակ մասնագետի պատրաստումը և ուսանողի մուտքը տարբեր ինֆորմացիոն աղբյուրներ, ներառյալ *Internet*-ը:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի յուրաքանչյուր ուսանողի մուտքով դեպի գրադարանային ֆոնդեր և տվյալների բազաներ, որոնք ըստ բովանդակության համապատասխանում են հիմնական կրթական ծրագրով նախատեսված դասընթացների լրիվ ցանկին, նույն դասընթացների բաղադրիչներին (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ, կուրսային և դիպլոմային աշխատանքների խորհրդատվություն, պրակտիկաների, ծրագրեր) նվիրված մեթոդական ձեռնարկների և ցուցումների առկայությամբ, ինչպես նաև տեսա-լսողական, բազմամիջավայրային նյութերով և ցուցադրական ձեռնարկներով:

Բուհի գրադարանը պետք է հագեցված լինի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների ուսումնամեթոդական համալիրներով, մասնագիտության նորմատիվա-իրավական ակտերով, տեղեկատու գրականության և չափորոշիչներով:

6.4. Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման պահանջները

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող բուհը պետք է ունենա նյութատեխնիկական բազա, որը համապատասխանում է գործող սանիտարահիգիենիկ նորմերին և հակահրդեհային կանոններին, ապահովում է օրինակելի ուսումնական պլաններով նախատեսված լաբորատոր, սեմինար, գործնական պարապմունքների և միջդասընթացային պատրաստման բոլոր ձևերի ու ուսանողների հետազոտական աշխատանքների կատարումը:

6.5. Պրակտիկաների կազմակերպման պահանջները

Ուսուցման ընթացքում առանձին մասնագիտական դասընթացների և ընտրած մասնագիտացման գծով գործնական ունակությունների, ապագա աշխատա-

վայրում հմտություններ և փորձառումներ ձեռք բերելու նպատակով բնագավառի կազմակերպա-իրավական տարբեր ձևերի կազմակերպություններում, հիմնարկներում և հաստատություններում (Եղվարդի, Բալահովիտի, Ոսկեհատի ուսումնափորձական տնտեսություններ, «Ինտերստանոկ» ԲԲԸ, Երևանի «Կարմիր բլուր» երկաթգծային տերմինալ և այլն) կազմակերպվում են ուսանողների ուսումնական և արտադրական (նախադիպլոմային) պրակտիկաներ:

Ուսանողի նախադիպլոմային պրակտիկան մասնագիտության ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչն է, որի կազմակերպման և իրականացման պատասխանատուն բուհն է: Նախադիպլոմային պրակտիկան կազմակերպվում է այն հաշվով, որպեսզի շրջանավարտը կարողանա այդ ընթացքում ստացած փորձառությունը օգտագործել իր դիպլոմային նախագիծը ձևավորելիս: Եթե շրջանավարտը ուսուցումը համատեղում է աշխատանքի հետ, բուհն իրավունք ունի թույլատրել աշխատավայրում պրակտիկայի անցկացումը, եթե շրջանավարտի աշխատանքի բնույթը համապատասխանում է բուհում ուսումնառած մասնագիտությանը:

Պրակտիկան կարող է կազմակերպվել նաև որոշակի կազմակերպությունում նախապես կազմված անհատական ծրագրով, եթե շրջանավարտը նույն կազմակերպությունում պաշտոն է զբաղեցնում: Արտադրական պրակտիկայի տեղերի բացակայության դեպքում բուհը (ֆակուլտետը) այն կազմակերպում է սեփական նյութատեխնիկական բազայի վրա, եթե այն հագեցված է ժամանակակից սարքավորմամբ և ծրագրային միջոցներով:

**7. 310801 ԳՅՈՒՂ.ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄ ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԱԿԱՐԴԱԿԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ**

7.1. Շրջանավարտը պետք է կարողանա լուծել սույն պետական կրթական չափորոշիչի թ.1.2 կետում նշված որակավորմանը համապատասխանող խնդիրները: Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը պետք է.

ա) հունանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում՝

- իմանա ՉՉ Սահմանադրության և իր բնագավառի օրենքները,
- ազատ տիրապետի մասնագիտական հայոց լեզվին (գրավոր և բանավոր) և հաղորդակցվի երկու օտար լեզուներով,
- ունենա պատկերացում առողջ կենսակերպի մասին, տիրապետի ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- իմանա հայ ժողովրդի պատմությունը և արդի քաղաքագիտական զարգացումները,
- ծանոթ լինի համաշխարհային մշակույթին, տիրապետի վարվելաձևի կուլտուրային, իմանա դրա էթիկական և իրավական նորմերը, որոնք կարգավորում են մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները,
- գիտենա հոգեբանության և մանկավարժության տարրերը,
- ծանոթ լինի ժամանակակից փիլիսոփայական ուղղություններին, գիտենա կեցության մասին գիտության հիմնադրույթները, նյութական և վերացականի հասկացությունները, մատերիայի կազմակերպման ձևերը, հետևի սոցիալական գլոբալ զարգացումներին,
- գիտենա տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրո- և միկրո-տնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

բ) բնագիտության և մաթեմատիկայի բնագավառում՝

- ծանոթ լինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին,
- տիրապետի մաթեմատիկայի հիմնական բաժիններին, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության մեթոդներին, մաթեմատիկական մոդելավորման եղանակներին,
- տիրապետի ինֆորմացիայի հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին և կարողանա օգտագործել ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաներ,
Գյուղ. մեքենայացում մասնագիտության գծով՝

1. մասնագիտական գործունեության բնագավառում անհրաժեշտ է՝ իրագործել գյուղատնտեսության և անասնապահության բնագավառների արտադրական գործընթացների համալիր մեքենայացման, էլեկտրիֆիկացման և ավտոմատացման աշխատանքները,
2. հաշվարկել և պահպանել գյուղատնտեսական ագրեգատների, մեքենաների, սարքավորումների աշխատանքի լավագույն ռեժիմները և տեխնոլոգիական պարամետրերը, ապահովել նավթամթերքի արդյունավետ օգտագործումը,
3. կազմակերպել գյուղատնտեսական տեխնիկայի սպասարկումը և պահպանու-

- մը, գնահատել կատարված աշխատանքի որակը և որոշել ինքնարժեքը,
4. գնահատել մեքենաների տեխնիկական վիճակը հայտնաբերել և վերացնել անսարքությունները,
 5. մշակել և կիրառել տեխնիկական փաստաթղթերը,
 6. օգտվել ժամանակակից հաշվողական տեխնիկայից և գիտատեխնիկական ինֆորմացիայի աղբյուրներից,
 7. գնահատել գյուղատնտեսական արտադրանքի ու մթերքների ապրանքագիտական բնութագրերը (դասակարգումը, սպառողական հատկությունները, ապրանքների որակը պայմանավորող գործոնները և դրանց վերահսկման ու գնահատման եղանակները),
 8. կազմակերպել գյուղատնտեսական արտադրության և արտադրանքի իրացման աշխատանքային գործընթացները,
 9. մշակել խնայողության ռեժիմի և նյութատեխնիկական միջոցների արդյունավետ օգտագործման և նյութական շահագրգռվածության միջոցառումներ,
 10. կազմել բիզնես պլաններ, հեռանկարային զարգացման ծրագրեր և հայտնաբերել սպասարկումների ոլորտներին դրամաշնորհ տրամադրող կազմակերպություններ,
 11. մշակել աշխատանքի արտադրության կազմակերպման ժամանակակից մեթոդներ բիզնեսի, մենեջմենտի և մարքեթինգի հիմնական սկզբունքների կիրառմամբ,
 12. իրագործել մարդու կենսագործունեության անվտանգության և շրջակա միջավայրի պահպանման միջոցառումները:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի հատուկ պատրաստությանը վերաբերվող պահանջները սահմանում է տվյալ մասնագիտացումն առաջադրող բուհը՝ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած, որոնք ՀՀ ԿԳՆ-ում մասնագիտացումը հաստատելուց հետո միասնական են դառնում այլ բուհերի համար, բխում են մասնագիտացման կրթաբլոկի բովանդակականությունից և տվյալ մասնագիտացմամբ մասնագետներ պատվիրած կազմակերպության գործառնություններից

Նշված փորձառությունները ներառում են՝

- հետազոտական աշխատանք վարելու, վերացական տրամաբանական մտածողության, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները կիրառելու և քննադատական վերլուծության ունակություններ,
- անձանոթ պայմաններում առաջացած ոչ կոնստրուկտիվ հիմնահարցերի բացահայտման, հաղթահարման և վերջնական լուծման, սեղմ ժամանակացույցով աշխատանքներ կազմակերպելու ընդունակություն,
- մասնագիտական գործունեության բնագավառում նորամուծությունների նկատմամբ ընկալունակության ցուցաբերում:

Մարդկանց հետ աշխատելու փորձառությունը ենթադրում է ճարտարագետ-բակալավրի ունակությունները՝

- այլ անձանց հետ փոխգործակցելու, կոլեկտիվում նրանց հետ հաղորդակցվելու,
- խնդիրներ ձևավորելու և դրանք ենթակառուցված պատվիրակելու,
- մարդկանց ստեղծագործական աճի ձգումը խրախուսելու և զարգացումն ապահովելու,
- ծագած տարաձայնությունները և բախումները լուծելու,

- տարբեր զարգացման և մտավոր մակարդակի տեր մարդկանց հետ համագործակցելու,
- մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների հասնելու նպատակով բանակցություններ վարելու,
- տարաբնույթ և տարասեռ մշակութային միջավայրերում աշխատելու և այլն:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի՝ ինֆորմացիայի հետ աշխատելու փորձառությունը պահանջում է պարտադիր հմտություններ՝

- պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակներում սեփական կարծիքը գրավոր և բանավոր ձևերով շարադրելու, քննարկելու և գործուն կարգով պաշտպանելու,
- լեզվային և մշակութային տարբերությունների հաշվառմամբ գրավոր ինֆորմացիան լսելու և վերլուծորեն ընկալելու,
- բանավոր, տպագրված և էլեկտրոնային աղբյուրներից ստացված ինֆորմացիան որոնելու, ստանալու, համակարգելու, գրավոր ձևակերպելու և օգտագործելու:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման գծով ճարտարագետ բակալավրը պետք է ծանոթ լինի տվյալների մշակման երկուսից ոչ պակաս համակարգերի, համակարգչային և բազմաօգտագործման տեղային ցանցային համակարգերին, ինչպես նաև կարողանա կատարել ինֆորմացիայի որոնում տվյալների ցանցային բազաներում (www), օգտվել էլեկտրոնային փոստից, տվյալների բազաների փաթեթից:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը պետք է հասկանա իր մասնագիտության էությունը և սոցիալական նշանակալիությունը, իր որակավորման շարունակական բարձրացման անհրաժեշտությունը հետբուհական և լրացուցիչ կրթություն ստանալու կամ էլ նոր գիտելիքների ինքնուրույն տիրապետման միջոցով:

7.2. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի եզրափակիչ պետական որակավորման պահանջները

7.2.1. 310801 Գյուղ. մեքենայացում մասնագիտությամբ

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի եզրափակիչ պետական որակավորումը ներառում է՝

ավարտական որակավորման (դիպլոմային) նախագծի պաշտպանությունը և համալիր առարկաների պետական քննության հաճնումը, որոնք թույլ են տալիս բացահայտելու շրջանավարտի տեսական և գործնական պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչներով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

7.2.2. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի ավարտական որակավորման (դիպլոմային) նախագիծը ներկայացվող պահանջները.

310801 Գյուղ. մեքենայացում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի ավարտական որակավորման (դիպլոմային) նախագիծը ավարտուն մի մշակում է, որը կատարված է մասնագիտության ուսումնական պլանին համապատասխան և նպատակ ունի ամրապնդել և ընդլայնել շրջանավարտի տեսական և գործնական գիտելիքները :

Դիպլոմային նախագծումը ուսանողի բուհում սովորելու ավարտական փուլն է և նպատակ ունի ամրապնդելու և խորացնելու գիտական, տեխնիկական, տնտեսական և արտադրական հիմնախնդիրների լուծմանն ուղղված տեսական և փորձարարական խնդիրները: Դիպլոմային նախագծման ընթացքում ուսանողը խորը ուսումնասիրում է դիպլոմային նախագծում մշակվող հարցերի լուծման հետազոտական և փորձարարական մեթոդները՝ զարգացնելով ինքնուրույն աշխատանքների կատարման իր հմտությունները: Այդ գործընթացում ի հայտ է գալիս ուսանողի պատրաստականության մակարդակը՝ ինքնուրույն մտածելու, որոշումներ ընդունելու և աշխատելու ժամանակակից արտադրական պայմաններում:

Դիպլոմային նախագծի կատարման ժամանակ անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել նախագծի հաշվարկաբացատրական և գրաֆիկական բաժինների՝ բնագրի կոնստրուկտորական փաստաթղթերի, հաշվարկային և գրաֆիկական նյութերի ճիշտ ձևավորման ոլորտների վրա:

Բովանդակային առումով ավարտական որակավորման (դիպլոմային) նախագիծը պետք է՝

- ներկայացվի որպես բնագավառի հիմնահարցերից մեկին վերաբերող տեսական, վերլուծական, սոցիալ-տնտեսագիտական կամ փորձարարական հետազոտություն, որում շրջանավարտը բացահայտում է իր տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, որոնք թույլ են տալիս ինքնուրույն լուծելու մասնագիտական բնույթի խնդիրներ,
- ցույց տա շրջանավարտի կողմից գիտական և համակարգային վերլուծության մեթոդների յուրացման աստիճանը, ունակությունը կատարելու տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ, հիմնավորված առաջարկություններ և երաշխավորություններ բնագավառի հիմնահարցերի լուծման կատարելագործման վերաբերյալ,
- կրի ստեղծագործական բնույթ՝ հավաստի վիճակագրական տվյալների օգտագործմամբ,
- բացահայտի շրջանավարտի պատրաստության աստիճանը ինքնուրույն աշխատելու գյուղ. արտադրության մեքենայացման ոլորտներում,
- համապատասխանի նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի փաստերի վրա,
- արտացոլի շրջանավարտի ունակությունը օգտագործելու տեղեկատվության որոնման, ընտրության, համակարգման և մշակման արդի մեթոդները, աշխատել բնագավառի նորմատիվա-իրավական ակտերի հետ,
- ձևավորված լինի հրատարակչական արդի նորմատիվներին և պահանջներին համապատասխան, ունենա հետազոտական աշխատանքի հաշվետվությանը բնորոշ կառուցվածք և 60-70 էջ համակարգչային շարվածքի ծավալ:

Ավարտական որակավորման (դիպլոմային) նախագծերի թեմատիկան սահմանում է մասնագիտացնող ամբիոնը: Թեմատիկայում պարտադիր կարգով պետք է ներառվեն՝

բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության և բերքահավաքի համալիր մեքենայացումը տվյալ գոտու պայմաններում, գյուղ.տեխնիկայի շահագործման կայանի կազմակերպման նախագծի առաջնահերթ և հրատապ հարցերը, հաշվի առնելով բուհի (ֆակուլտետի) ընտրած մասնագիտացումները և ընտրովի դասընթացների բովանդակությունը ըստ կրթաբլոկների:

Ավարտական որակավորման (դիպլոմային) նախագծի կառուցվածքում պետք է

ներառվեն հետևյալ բաժինները՝ ներածություն, տնտեսության համար նկարագիր գրականության ակնարկ, մշակաբույսի մշակության ագրոտեխնիկան և մեքենաների համակարգի ընտրությունը: Հիմնական աշխատանքների համար մեքենատրակտորային ագրեգատների կոմպլեկտավորման հաշվարկները: Մեքենայացված աշխատանքների տեխնոլոգիական քարտերի կազմումը: Տրակտորների օպտիմալ կազմի որոշման մեթոդիկան՝ ծանրաբեռնվածության գրաֆիկների օգնությամբ: Նախագծի տնտեսական հիմնավորումը: Աշխատանքի պահպանության և բնության պահպանության միջոցառումների մշակումը:

7.2.3. Պետական քննությանը ներկայացվող պահանջները.

Եզրափակիչ որակավորման (պետական) քննության բովանդակությունը, անցկացման ձևը և ուսանողների գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է բուհը (ֆակուլտետը) և հաստատում բուհի գիտական խորհուրդը: Նրանում պարտադիր կարգով ներառվում են հարցեր մասնագիտության հետևյալ հիմնական ուսումնական դասընթացներից՝

1. գյուղ. տեխնիկայի շահագործում,
2. մեքենաների հուսալիություն և նորոգում,
3. գյուղ մեքենաներ,
4. տրակտորներ և ավտոմոբիլներ,
5. անասնապահական ֆերմաների մեքենայացում:

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը առընթեր 310801- Գյուղատնտեսության մասնագիտությունների մեքենայացում մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի աշխատանքային խումբը

Գյուղ. մեքենայացման և ՏՓ ֆակուլտետի դեկան,
պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը անուն, ազգանուն

Ավտոտրակտորների և տրանս. փոխ. ամբ. վարիչ, պրոֆ. *Ջևա* Ն. Ա. Բագիկյան
պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը անուն, ազգանուն

Գյուղ. մեքենայացման ամբիոնի վարիչ, պրոֆ. *Մարտիրոս* Ա. Մ. Եսոյան
պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը անուն, ազգանուն

Գյուղ. էլեկտրոֆիկացման ամբիոնի վարիչ, դոց. *Մարտիրոս* Ա. Ա. Մաթևոսյան
պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը անուն, ազգանուն

Գյուղ. տեխնիկայի շահագործ. ամբ. վարիչ, պրոֆ. *Մարտիրոս* Ա.Ս. Մարգարյան
պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը անուն, ազգանուն

Գյուղ. մեքենաչին. տեխ. և նորոգ. ամբ. վարիչ, պրոֆ. *Մարտիրոս* Դ. Պ. Պետրոսյան
պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը անուն, ազգանուն

310801 - Գյուղատնտեսության մեքենայացում մասնագիտության
դասիչ մասնագիտության անվանումը
պետական կրթական չափորոշիչը քննարկվել և հաստատվել է
մասնագիտության ուղղությունը պետական կրթական չափորոշիչները մշակող
գիտամեթոդական հանձնաժողովի 2008թ նիստում (արձանագրություն թ.):

Հանձնաժողովի նախագահ՝
ՀՊԱՀ ռեկտոր, պրոֆեսոր
պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Ա. Պ. Թարվերդյան
անուն, ազգանուն

« _____ » _____ 200__ թ

Համաձայնեցված է.
ՀՀ ԿԳՆ բարձրագույն և հետբուհական
մասնագիտական կրթության վարչության պետ՝
գիտ.աստիճանը կոչումը

Ռ. Գասպարյան
անուն, ազգանուն

« _____ » _____ 200__ թ